



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



891 99

70

1855



50

Printed in Turkey

Συναρτησιν 1/5.

Handwritten text, possibly a signature or name, written in cursive script.



891.99

70 *ur*

ՎՐՈՒՐԻ ՈՐՄՋԴԱՆԱՅ

ԱՌԱԿԱՅՆ

ԳԻՐԳ ԵՐԿԵԱԿ



*1863*  
Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—  
1863

~~4749~~



919  
39

86-42



Printed in Turkey

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ԱՌԱՋԻՆ ԳՐՈՅՍ

Խըրատս ընդ խաղ նախ փութեալ  
ցին<sup>1</sup> խառնեաց ըզգօն ծերուենին •  
Ընդ նոյն ապա ընդ արտ 'ի հունձ  
անց ձերբաղատն Աւգոստեայ<sup>2</sup> •  
Ըղհեա նոցին շրջիմ ես արդ հաս-  
կաքաղ,  
Առ 'ի զասրեալն 'ի բաղմաչեայց  
անտի քաղել հրնձողաց :  
Սակայն թէպէտ և անդս այս ոչ  
այնպէս հրնձի սպառնալուս :

<sup>1</sup> Եսովպոս առակախօս Յունաց :

<sup>2</sup> Փեղրոս առակախօս Լատինաց :

Ձի մի մնասցէ հետադայից ինչ ան-  
դանօր 'ի հընձեւ,

Բայց առաւել է զուարճալի, բայց  
առաւել է գիւրին

Գընալ 'ի մէջ ծածանելոց ատոք  
հասկաց մանդաղաւ,

Քան թէ խընդրել զոճ հասկաթուռ  
'ի մէջ արուգ խողանին:

Մի գու զքաղուած իմ սլարսա-  
ւեր բարեհամբոյր ընթերցող,

Ձի ոչ ամօթ ինչ համարիմ վարել  
այլոց հանձարով,

✓ Ըզհայկազինն<sup>5</sup> 'ի չափ տաղի յե-  
րիւրեալ գիւտս Եսովսայ:

Թէպէտ և ոչ նոր ինչ 'ի ամա քան  
ըզնորայն ասիցեմ,

Թէպէտ և ոչ այսու ստեղծիչ և  
հայր բանի կոչեցայց,

Շատ իսկ է ինձ ոչ գու բնադրի ա-  
ղարտիչ:

Թերևս ընդդէմ երկոցս՝ ընդէր, ա-  
սիցես,

Օտարոտի փեարովք սլըճ'նիս ճայ-  
օրէն,

---

1 Միսիթար Գօշ առակախօս Հայոց:



Ուր թրակացին իսկ 'ի համար ամէ  
ազգ

Մատենագիրըս զՈրփէոս այլովքն  
հանդերձ և զԼինոս : -

Վառել յիմում իսկ 'ի սըրտի վա  
ռի բոց

Նաւթձէլ սարժանըս հայրենեաց ,  
յաճիլ 'ի ձեռս իմասանոց ,

Եւ 'ի դարանըս մատենից առնուլ  
կայս .

Այլ ինձ չափով հանձար 'ի բնէ  
պարգևեալ ,

Ըզկայ առնում յոր վայր կարեմ  
գոլ ժաման .

Եդեալ ինձ կէտ նրապատակի զառա  
ջեաւ .

Արժարժանել 'ի սիրտ ըզսէր սո  
փերի ,

Ըզհամազդեաց ամէլ ըզմիտս 'ի զգօ  
նութիւն և յիմաստ ,

Եւ հրահանգել զախորժակս յոճ  
ինքնազարդ ,

Թէպէտ յօտար թէ յիմոյին ինչ 'ի  
մտաց հանձարեալ :

Եթէ ցանկաս ընդ բարդաւաճ ա  
զանց 'ի վէդ գալ 'ի գիր ,

Մանկաբույժ հասկանալի, ուսիր ըզբերե՛լ  
ամա և դքիմըս կըրթել,  
Մանձաճարեալ դասիական ուսուցչու  
ուսուցչու ճոխութիւն :

# ՎՐՈՒՐԻ ՈՐՄՁԴԱՆԱՅ

ԱՌՍԿԱՅՆ

ԳԻՐԲ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱԿ Ա

ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՐԵԻ

Լուսաբողոք կարակնացեալ լուսին  
'ի ջինջ գիշերի,

Ընդ գունդ երկնից աստեղազարդ  
ընթանալով ճոխաճեմ,

Ի ծագել զարծաթափայլըն լոյս 'ի  
բնաւ համագոյս,

Համարեցաւ գոլ արեգակն և նայաւ  
սէս ածել տիւ.

Այլ յամփոփել արփւոյն 'ի բաց  
ըզճառագայթս 'ի նմանէ,

Ծանեաւ զի ոչ իւր էր փայլումն,  
այլ յարեէ եկամուտ:



Որոց 'ի բարձ աւագութեան  
խրոխտացեալ  
Գեր 'ի վերոյ քան ըզբնութիւն իւ-  
րեանց զանձինս համարին ,  
Նոցա առակս այս ասացեալ է 'ի  
խրատ :

Մ . ԳՅԶ . Դ .

## ԱՌԱԿ Բ

### ԱՍՏԵՂՔ ԵՒ ԼՈՒՍԻՆ

Համախըմբեալ երբեմն յերկինս  
աստեղաց ,  
Յողունք գոլով մեր , ասէն ,  
Ընդէր հանգոյն արեգական և լուս-  
նի  
Ոչ առնեմք տիւ , և ոչ իսկ գէթ  
լուսաւորեմք ըզգիշեր :  
Զի ոչ , ասէ ոմն 'ի ծերոց , 'ի միա-  
սին երևիմք :  
Հաւանեցաւ ընդ այն կաճառն երկ-  
նախումբ .  
Այլ 'ի ծագել յայնժամ լուսնի  
ըզդարտութիւն յանձն առեալ ,



Եթէ այսպէս, ասէն, բընաւքս ա-  
ղօտացաք 'ի սմանէ,

Զի՛նչ 'ի ծագել լուսապայծառ  
արիււոյն լիցի ապա մեղ:

Խրատէ առակս՝ ընդ տըկարի  
դալ 'ի փորձ,

Մինչ չե՛ 'ի մարտ ընդ հըղօրի խի-  
ղախեալ:

Մ. ԳՅ. Ե.

## ԱՌԱԿ Գ

### ԱՐԵԻ ԵՒ ԾԱՌԻՔ

Խընդրեցին ծառք յարեգակնէ թա-  
ղաւոր.

Եւ կենարար հայրն 'ի նոսա զնորին  
եթող ընարու թիւն:

Յառաջեալ ի դումականն արմաւե-  
նի քաղցր 'ի միրգ,

Ի բարձրաբերձ դխտակ իւր զա-  
քս բոլորից զօշոտեաց.

Նրմա սասիս 'ի մէջ կացեալ Դիտնի-  
սեայ սիրելին,

Ուրախաբար որթ յակրնթեայ ող-  
կուղիւք

Ի յերկառասկ կարծիս ըզվարկ-  
սըն կացոյց,

Զի մի ժըլատըն տիրեսցէ հրապա-  
տակաց ատելի,

Անճաշակ յանմատչելի բարձու ըզ-  
միրդս ունելով:

Երկաքանչիւրցըն նախանձորդ յա-  
ռաջ անցեալ թըղենի,

Դիւրամատոյց պըտղոմն, հըլու-  
ուղէշիւք,

Զհանգերձելոց հրապատակացն ըզ-  
սիրտ 'ի նպաստ իւր յանկոյց:

Ըմբոստագոյնս յայնժամ դըժնիկն  
անցեալ 'ի մէջ ատենին,

Այժմէն, ասէ, կէսքրս գերի որ-  
կորըստեան եմք մարդկան,

Եւ ստրուկ ընդ վատ տերամբ լիցի  
նոցա գըրոհս համօրէն,

Եթէ ոչ գոուն և հարկանող 'ի մէնջ  
կացցէ մեզ իշխան,

Գող ըզձալի աղատութեան վրէժ-  
խընդիր:

Զանհաշտելի վէճն յայնժամ հայ-  
րըն բողորից լուեցոյց,



Ըղբաժանեալ յիւրաքանչիւր 'ի  
նոսա զձիրս արքունի

Դարանակալըս գահոյից 'ի նպաստ  
միմեանց կարգելով .

Օրինաւոր ըզնրունենին թաղաւոր  
Վասն ընդաբոյս նորայն թաղի և  
ձիրանեացն կացոյց .

Մատրուակ նրմա զայդի՝ պաշտել  
նեկտար ծաղկահամ ,

Հաղարապեա զարմաւենի , բը-  
ղեաշխ ըզհեզ ձիթենի .

Իսկ ըզգըժնիկ կացոյց զըժնեայ  
գահճապեա :

Նոյնպէս և զայլս առ հասարակ ,  
զոր 'ի գարման , զոր 'ի սպաս ,

Համ 'ի պատշաճն յիւրաքանչիւր ա-  
րար 'ի կայս պիտանի ,

Ըղջօրինուած ցուցեալ մարդկան  
ըղբարեկարգ արքունեաց :

Մ . Գօշ . Ե .

## ԱՌԱԿ Դ

ՈՐԹ ԵՒ ՄՈՐԵՆԻ

Եւ շնորհ անդամ չարագործին է  
անշնորհ :

Որդեկոտոր լեալ որթ 'ի սուր  
սայր յօտոցին, արտասուէր .

Ըզծընգասէր հարսինն տունիք  
դան ըսփոփել ըզթախիծ .

Գիրկս արկանէր կարեկցաբար նը-  
ւաղելու մըն կընձնի ,

Ողոքելով ըզսուղ 'նորին' թէ մի  
լար :

Զի բազմահոյլ որդեակս ընդ հուս  
ծընցիս դարձեալ վերըստին ,

Եւ զի դարձեալ ուրախամիտ մայր  
ողկուզաց բերկրեսցիս :

Իսկ 'ի մատչել և ժանտաժուտ մո-  
րենուոյ

Փըշուտ ոստովք սրբել զարտօսըր  
նորին ,

'Նա հրաժարեաց և շնորհ ունիմ,  
ասէ, խնամոց մըշակին ,

Զի զքեզ խըլէ 'ի բաց յխմէ ար-  
մատոյ :



## ԱՌԱԿ Ե

ԹԶԵՆԻ ԵՒ ՆՌՆԵՆԻ

Պիտանեգոյնք 'ի ձրից յաճախ ան-  
գոսնին :

Քաղցրապրտուղըն թըղենի առ  
նըռնենին գայ արրտում ,  
Թէ բախան ընդէր արար ըղնա  
կակղուղէշ .

Ձի համարձակ յամենեցունց կո-  
ղոպաի :

Որում արքայն ծիրանաղգեաց կա-  
րեկցելով՝ Գուսար , ասէ ,

Գոհ դու ընդ բախա քոյին լեր .

Ես , զոր ծառոց կացոյց բնութիւն  
թաղաւոր ,

Վարկանէի ինձ ինասակար ըղծի-  
րանի և զպրսակ ,

Թէ չէին ոստք իմ հոսանուտք դիւ-  
րահակք ,

Իւ ըղծանունս առ 'ի յագուրդ ա-  
գահակամ արնկողին

Կրբեմ ըղծիրգս , և նրբաատեղն  
ուղէշք իմ ոչ բեկանին :

Իսկ դու որ միրգըս քաղցրագոյ-  
նըս բերես,

Թէ ոչ հըլու առ հէնա 'ի վայր հա-  
կէիր,

Ոստակոտոր ըզբեզ արդեօք առ-  
նէր անյագ որկորուսա :

Մ • Գօշ • ԺԲ •

## ԱՌԱԿ Զ

ԹԹԵՆԻ, ԶԻԹԵՆԻ ԵՒ ՆՌՆԵՆԻ

Ի խնամութիւն գալ կամեցան ընդ  
իրեարս

Անուշահամըն թըթենի և յարա-  
զուարձ ձիթաստան •

Սա 'ի բեղնոյ առատութիւն սգան-  
ծացեալ

Եւ 'ի ձիթոյն նիւթ փարատիչ խա-  
ւարի •

Նա 'ի սաղարթ իւր 'ի ճարակ որ-  
դանն 'ի նիւթ բեհեզոյ,

Թագաւորաց և դըշխոյից 'ի վայել •  
Մին անթառամ 'ի ձմերայնի հե-  
րասպանձ,



Միւսն ըզմըրգացըն քաղցրութիւն  
նրմա 'ի դէմս ամէլով,

Վէճն երկուստէք զայրանայր :

Իրաւարար յայնժամ եկաց 'ի միջի  
Ծառոց արքայն ծիրանազգեաց նրա-  
նէնի .

Եւ անխրտիր զերկաքանչիւրցըն դո-  
վելով ըզվաստակ ,

Հաստատագոյն այսպէս ըզզօդ  
խնամեկան

Ի հաւասար բախտին եցոյց 'ի նը-  
սէհ :

Մ . Գօ<sub>2</sub> . ԺԳ .

## ԱՌԱԿ Ի

ԴԱՄԱՆ , ԾԻՐԱՆ ԵՒ ՄԱՐԴԻԿ

Ամբաստանեալ յոմանց դամոնս և  
ծիրան

Զի զատամուներս կերողաց հարկա-  
նէն ,

Պատասխանի ետունս նոցա և ասէն .

Գիտեն հրմուտք 'ի բըժըշկաց զի  
մէք դըրդուիչք եմք թանչից .

Արդ թէ լորձեմք, և դմեղ մարդիկ  
սակայն ուտել յաճախեն,

Զինչ առնէին թէ զկերտոլաց ոչ  
առնուաք զատամուհս :

Շնորհակալեաց ուրեմն ելով ար-  
ժանիք,

Տարապարտուց լինիմք 'ի ձէնջ դա-  
տափեաք :

Առախս 'ի դէս դայ բերկրու-  
թեանց աշխարհի .

Զի թէ կրցորդ գողով աղէտք այ-  
նոցիկ,

Եւ զհետ նոցա զառաժանին անըզ-  
դոյշք,

Զիցէ՞ արժան մեզ գոհանալ զա-  
րարչէն,

Զի զփուշ ընդ վարդ և զցաւ խառ-  
նէ ընդ հաճոյս :

Մ • Գօշ • ՓԵ •

## ԱՌԱԿ Ը

## ԴԵՂՁԻ ԵՒ ՍԵՐԿԵՒԼԻ

Ըղսերկեիլ խոտէր դեղձի ասելով .  
Ի ու դեղնաշորթ դու կարծրատորր  
'ի ճաշակ ,

Իսկ ես գողարիկ դիւրաճաշակ  
ու ախորժ աչաց 'ի աեսիլ :

Այլ կեղծաւոր ես և սրատիր , յա-  
ւել առ նա սերկեիլ ,

Զի գողար 'ի քիսն' առնես վընաս  
'ի փորի .

Իսկ ես 'ի բոյժ ախտաժեւաց յա-  
ճախեալ ,

Վ անն այն դեղնիմ և 'ի դալուկն  
հարկանիմ :

Յայտնի են միտք առակիս .

Զի վարք բարեաց թէպէտ և խիստք  
առաջօք ,

Այլ դեղ սղւոց սիրելաբար եղա-  
նին :

Մ • Գ. Ե. Ժ. Զ .



## ԱՌԱԿ Թ

## ՅՈՒՆՍՊԻ ԵՒ ՄՍՅՐԵՒՈՐ

Որք ըզմարդիկ ոչ ըստ գործոց՝ այլ  
 թիւր ըստ աչքս դատեն,  
 Յանդիմանէ դիմառնաբար առակս  
 այս :

Ըզյունապի, զոր համակերպ առ  
 աչս ամլոյն դրժնրկի

Արար բնութիւն համագոյլց մալր  
 էից ,

Հար ընդ վայրի փայտս անառի  
 մայրեոր ,

Այլ ընդ այլոց համարելով զայն  
 դրժնիկ :

Առ որ զբրկեալն սրբաառուչ արկ  
 բողոք .

Ի պըտոյն ո՛ր անագորոյն , ոչ 'ի վե-  
 րին երեաց ,

Ըզձառ արժան է դատել :

Մ . Գ. 02 . ԺԸ .

## ԱՌԱԿ Ժ

ԾԱՌՈՒՔ ԷՒ ԹԱԳԱԻՈՐ ՆՈՑԱ

Որպէս ռամկին սովորուածին է դու  
արժգոհ զիշխանէն ,

Բողոք ընդդէմ՝ թագաւորին եբարձ  
և ազգ բուսական ,

Իբր՝ ի նմանէ աչառանօք բաշխեալ  
անձնիւր ըզնրսէն .

Ոմանց՝ ի տան ընակէլ հանդոյն նա-  
ըրնջի ,

Ի բուրաստանրս գեղեցիկս այլոց  
կեալ .

Կիսոց դրդուել փայփայանօք յայ-  
գեստանս ,

Այլոց ճարակ լինել խողից , լինել  
կոխան գաղանաց .

Վայրաբնակէլ այլոց լըքեալ յան-  
տառի ,

Որպէս մայրից կաղամախեաց և նո-  
ճից ,

Զորս անխընայ աւար հարեալ մայ-  
րևորք





## ԱՌԱԿ ԺԱ

ԾԱՌՌԻ ՊՏՂԱՅԵՐԻ ԵՒ ՈՒՂԵՒՈՐ

Ի դրախտ ուրեք 'ի ձմերայնի մը-  
տանէ այր ուղևոր ,

Քաղէլ պրտուղ 'ի ծառոց .

Եւ ոչ տերև յայնժամ դրտեալ 'ի  
նոսին ,

Թըշնամանէր ամուլս արուգս ըղ-  
նոսա :

Առ որ մի ոմն 'ի նոցանէ հեղաբար .

Մի արբամիր այր դու և մի զմեղ 'ի  
նանիր բամբասեր .

Զի ձմերայնի թէ ոչ հանդէսմք զօ-  
րանալ ,

Չկարեմք ծաղկել գարնայնի ,

Եւ ոչ ըղմիրգս յամարայնի դայե-  
կել ,

Տալ զայնոսիկ քեզ յաշնայնի 'ի  
ճաշակ :

Ընդէր դու ոչ եկիր յայնժամ վայ-  
էլէլ ,

Յորժամ մարդ և անասունս պըա-  
ղովք մերովք կերակրէր :

Թէ դու պատրաստ 'ի ճաշակել ի  
ցես միշտ ,

Այլ ոչ և մէք միշտ 'ի ջամբել քեզ  
ճաշակ :

Ըզհիւր առակս այս կըշտամբէ  
ղինքնակոչ ,

Որ ճաշ յայլոց դայ պահանջել տա  
րաժամ :

Մ • Գ. 02 • ԻՍ •

## ԱՌԱԿ ԺԲ

### ՄԱՅՐԻ ԵՒ ՄԱՅՐԵՒՈՐ

Ըզհաստարմատ մայրի 'ի դու ի բար  
ձու լերին կանդաղեալ

Եհարց երբեմն մայրևոր ' թէ ըն  
դէր

Այդչափ 'ի խոր տարածանես դու  
արմատ :

Աւ որ մայրին • Զխորդ չամուս  
դու 'ի միտ այր խոհական ,

Զի չէր ինձ մարթ ընդ բընաշունչ  
հիւսիսի

Կալ 'ի պայքար, ունել զայսքան  
 ոստա 'ի վեր,  
 Թէ նոյնքանիս ոչ սրբութի արմա-  
 արս շուրջ ընդ երկրաւ.  
 Տէս ըզհամհարդս խմ զհաճարի և  
 զփիճի,  
 Ո՞րպէս խըլին արմատաքի 'ի հող-  
 մոց,  
 Ամբարձուղէչք կաճին 'ի խոր ջև  
 արկեալ:  
 Աղղէ առաիս այս աւաղաց՝ խո-  
 նարհուժիւն հաստահիմն  
 Իջևանուժեան իւրեանց խարխիս  
 արկանել:

Մ. Գ. Ե. Ի. Բ.

### ԱՌԱՎ ԺԳ

ԿԱՂՆԻ ՎԱՅՐԻ ԵՒ ԱՐՔԱՅ ԿԱՂՆԻ

Ըղղեղ սնտաի և արուղ,  
 Անխառուճակ յանդիմանէ առաջի-  
 կայս քեղ առակ:  
 Բարձր 'ի հասակ իւր խորտաա-  
 պանձ կաղնի վայրի սնափառէր,



Այն որոյ միրգ է անպիտան 'ի ճաշակ :

Անժոյժ ընդ այն արքայ կաղնի այսպէս ըզնա կըշտամբեաց .

Համանըման քեզ խընձորի ու այլք 'ի ծառոց 'ի հասակ ,

Քան բարձրութեամբ՝ պըտղովք իւրեանց մեծարին .

Զի սնապարծիս , ես իսկ խոնարհ գոլով թուի ,

Սահայն յարդիս 'ի մարդկանէ պըտղաբերեալ ինչ նոցին .

Իսկ քոյինքդ աղբասըտիս կենդանեաց միրգք են ճարակ :

Մ . Գ. օ. Ի Գ .

## ԱՌԱԿ ԺԴ

ԹՈՒՓՔ ԵՍՈՍՆՁՈՐԴՔ

Հաւամըրդի և ցարասի բարձին երբեմն բողոք ,

Թէ՛ նդէր հանգոյն գոլով աեպլեամբ մըրտենի ,



Հանգոյն իւրեանց թուփ և խոնարհ  
վարդենի,

Բնակեն արգոյք 'ի յապարանքս  
ճոխից,

Եւ զկայ ինքեանք առնուն ընդ ցախ  
'ի յանկեան,

Գործի անարգ զաղբիս 'ի բաց մաք-  
րել ըզտանց և դռեհից :

Զի զհոտ անոյշ այլոց և զոյժ աս-  
տարոյժ

Ա յապէս նախանձ կոյր տայր նոցա  
առնել աստիտ և անտես :

Խրատէ առակս այս սինըքոր ո-  
րերոյ

Ի սրայմանին իւրեանց կալ գոհ ան-  
տըրտունջ,

Ի տեսանելն մեծարեալ զառաքի-  
նեաց ըզվաստակ :

Մ • Գ • Ե • Ի • Ե •

## ԱՌԱԿ ԺԵ

ՅԻՆԿ ԵՒ ԾՍԱԿՈՒՆՔ ԱՐՕՏԱԿԱՆՔ

Գրնդածաղիկ , առուոյա և այլք 'ի  
դաշտայնոցն ծաղկանց ,

Կարմիր կապոյա ծիրաներութեան և  
սպիտակ ,

Անխոհականք ըզցինի խարտէշ խո-  
տելով ,

Ընդէր , ասեն , մէք զուարճանաւք  
և դու ծիւրիս դեղնաշորթ :

Իսկ նա ասէ . Քանզի անմիտք էք  
ոչ ածէք ըզմբտաւ ,

Զի վասրն մեր սրբին միշտ սուրք  
գերանդեաց .

Զոր իմ ընդ միտ ածելով միշտ ,  
դեղնիմ զահի հարկանիմ :

Ի ճահ առակս այս այնոցիկ սլա-  
տահէ ,

Որ մահացուք էլով ոչ ինչ զանդի-  
տեն ,

Ծաղր իսկ յանդուգն գերկիւղած  
ըզգուշութիւն առնելով :

## ԱՌԱԿ ԺԶ

## ՀԱՃԱՐ ԵՒ ՄՆԵՒ

Հաճար և մնեւ ամրածածուկ պա-  
 տրասպարեալք 'ի պարկուճ,  
 Աղբրբէլիք պանծային դող 'ի  
 թրուչնոց,  
 Այլ 'ի կոխան լինել յանկարծ յե-  
 րէոց,  
 Ասէն յայնժամ անադանի ստրը-  
 ջացեալ,  
 Ադահեցաք անխայելոյ աղադաւ,  
 Եւ ահա արդ վարկպարագի և սպա-  
 ուրսպուս կորրնչիմք :  
 Խրատէ առակս այս ըղձըլատ  
 ճոխուժիւն,  
 Որ աղքատաց ողորմելեաց աղա-  
 հեալ,  
 Վատնի 'ի շուայլ և յասպաշնորհ ժա-  
 ոանդաց :

Մ. Գ. 02. Կթ.



## ԱՌԱԿ ԺԷ

## ՍԻՍԵՌՆ ԵՒ ԲԱԿԼԱՅ

Անկառ սխառան հատ խուճափեալ  
 'ի կերողի պատառէ ,  
 Եւ որպէս վատ 'ի բակլայէ այսպա-  
 նեալ ,

Որ անխորլիրա դայ տափարակ ձե-  
 ուն հեշտին 'ի ճարակ ,

Չեմ ինչ երկչոտ , ասէ , այլ խոյս  
 'ի սպանողէ ամա 'ի բաց :

Ըղյանդուզն արիութիւն յան-  
 դիմանէ առակս այս ,

Ըղխոհական մեծարելով զգուշու-  
 թիւն :

Մ • Գ. Ժ. • ԽԱ. •

## ԱՌԱԿ ԺԸ

ՈԼԵՌՆ ԵՒ ՉԱՓՈՂ

Ջերծեալ ոլեռն գիւրագլոր 'ի չափողի ձեռանէ ,

Նա զայրագին ասէ . Կորիւր ճարակ լեր հէք դու թրուչնոց :

Աս որ ոլեռն . է 'ի կասպճիդ բաւահան

Ի հուր 'ի ջուր չարալըլուկ տանջելոյ .

Լաւ իցէ ինձ ճարակ ևեթ դու հաւուց :

Խրատէ առակս ըզփոքրագոյն ընարեւ չար :

Մ . Գ. Ե. ԽԳ .

## ԱՌԱԿ ԺԹ

ԳՍԼԵՆՈՍ ԵՒ ՔՆԱՀԱՏ

Ըղխաշխաշոյ սերմըն քնաբեր տըք-  
նելոյ

Ի Գալէնեայ լըւեալ ուրումն, արկ  
'ի պարտեղ իւր 'ի փորձ .

Իբրև բուսաւ, բանջար դեռւըս գո-  
լով՝

Առեալ եկեր զայն, և ոչ ինչ օգ-  
տեցաւ :

Նրմանապէս և 'ի ծաղկելն առեալ  
ըզնոյն 'ի ճաշակ ,

Եւ 'ի ծաղկին գըլխաւորել, օգտե-  
ցաւ ինչ և ոչ անդ :

Յայնժամ կոչէրնա խաբեբայ զԳա-  
լէնոս ,

Եւ ըզբրժիշկս առհասարակ եպե-  
րէր :

Նոքա լըւեալ սաստեն նրմա ասե-  
լով .

Անմիտ դու այր, թէ տարաժամ  
ճաշակմամբ



Անդոր ըղգեղն և անօգուտ կացուցեր ,

Զի՞ մեղադրես տարապարտուց բռժրչկաց :

Խրատէ, առակս այս մի անժամ լինել 'ի դործ ձեռնամուխ :

Մ . Գ. Ե. ԽԹ .

## ԱՌԱԿ Ի

### ԱՍԿԼԵՊԻՈՍ ԱՌ ԽՍՏՈՐ

Իւրաքանչիւր 'ի պայմանին իւրում և և թէ է հաճոյ :

Համեմբ 'ի ճաշ հրաւիրեցան առ տուածոց .

Չորաւ և ժանան անդրը խրատոր ընդ նոսին հիւր ինքնակոչ :

Բաժակակալք անկան ոսկիք , պաշտէր նեկտար և ամբրոս .

Եւ մինչ 'ի զուարթ հընչէր Ուլանս 'ի խրախճան ,

Որտողին Արամաղղայ գինեպաշտ Ի մատուակել ոսկի նուազաւն

ըղծաղկահոտ ըմպելին ,

Ծանեաւ 'ի ժանա հոտոյն զանկոչ  
բազմահանն .

Եւ ըզժբալիրհն անտի սասաիւ ար-  
տաքսեաց :

Յակըմբահոյլ 'ի դիցն յայնժամ  
Ասկլեպիաս առ հէքն այն .

Ի թիւրակէ հաստեալդ , ասէ , դեղ-  
ջէկց ,

Յիրաւի մերժիս 'ի վէհ բազմահա-  
նէս դու 'ի բաց :

Մ . Գօշ . ԾԳ .

## ԱՌԱԿ ԻԱ

ՍՈՒ ԵՒ ԽՈՂԵՍԱԿ

Տարապարտ ըզՆենիս<sup>1</sup> կոչես սը-  
գոյդ 'ի սփոփանս :

Ճըխտհակեր , որ բըժացեալ ա-  
ջօք ըզսոխ կեղևեր ,

Աէ կոճղէզն . Յանիրաւի մատչե-  
լով զոհ որկորոյ ,

<sup>1</sup> Եզերամայր տիրուհի լալականաց :

Սփոփիմ քոյովքըդ կարեկից ար-  
տասուօք •

Զի և դահիճդ 'ի դուժ ընդ մահ  
իմ շարժիս :

Յայնժամ խոհեակն ասէ • Խաբիս  
դու անմիս ,

Անն իմ ևեթ հեղու արտօսը և ոչ  
սիրտ :

Մ • Գ. Ե. Ծ • Ե •

## ԱՌԱՎ ԻԲ

### ՍՏԵՊՂԻՆ ԵՒ ՇՈՂԳԱՄ

Երկչոտ 'ի բնէ ստեպղին աճէ ընդ  
երկրաւ •

Եւ հարցեալ 'ի շողգամէ թէ 'նդէր  
ծածկիս դու անտես ,

Պատասխանի ետ • Պատկառեմ՝ զի  
դու կարմիր և սպիտակ՝

Այդպէս բնաւից կաս 'ի տեսիլ հա-  
մարձակ :

Աւ որ շողգամ ասպարանեալ • Ոչ  
ինչ ընդհատ , ասէ , քոյդ



Եպերեղի է զգուշութիւնս ծայրա-  
յեղ :

Յանդրդնութեան և երկիւղի ու-  
սուցանէ քեզ առակս  
Ըղկայ առնուլ խոհեմութեամբ մի-  
ջասահման 'ի վայրի :

Մ . Գօշ . ԾԶ .

## ԱՌԱԿ ԻԳ

ՍԵԽ ԵՒ ԸՆԿՈՒԶԻ

Յանխառուեալ աղգատոհմէ բան-  
ջարոց

Հասուեացեալ և քաղցրացեալ սրան  
ծայր սեխ ,

Յորջորջելով զինքն սլառուղ ար-  
քունի .

Եւ քամահէր դառն 'ի յեպեր զըն-  
կուղի ,

Զի բարձրաբերձ և սառւար գոլով  
նա ծառ՝ մրգուղ բերէ միրդ :

Ում նա 'ի դէպ թերեւս , ասէ , սլար-  
ճէիր ,

Թէ ոչ դիւրեղծ դու դիպէիր և ան-  
հալ .

Այլ դիւրափուտ դու վնասակար  
'ի ճաշակ ,

Որովայնանցըդ լինելով , դուր 'ի վե-  
րայ իմ պանծաս ,

Որ բազմատե բերեալ պըտուղ , և  
լուսոյ նիւթ ընծայեմ :

Յեղծականաց աստի բարեաց կեն-  
ցաղոյս

Խրատէ առակս ըզգուշանալ , գող  
յաւերժից ըզձակերտ :

Մ . Գօշ . Ծէ .

## ԱՌԱԿ ԻԴ

### ՀԻՒՐ ԵՒ ԶՄԵՐՈՒԿ

Ի պըտղաւէտ ուրեք մըտեալ 'ի  
պարտէզ ,

Ետես անկեալ հիւր ըզձմերուկ ընդ  
երկիր .

Եւ հարկանել զայն կամելով և ու-  
տել ,

Զմեքուհն ասէ . խնայեա յիս այր  
դու , զի ես ձու եմ փրղի .

Տար զիս 'ի տուն քո սրահեաջիր ըզ-  
դուչեալ ,

Եւ ծանրագին ստացիս յինէն փը-  
ղորղի :

Անաց նրմա դիւրահաւան քաղց  
չահու ,

Եւ զկարծեցեալ ձուն աւարնին  
յուսով կորեաննն տածէր ,

Մինչև օրհաս բուսականի բնու-  
թեանն ըզնա փրտեցոյց ,

Զէրծ 'ի սպանող սուսերոյ :

Խրատէ առաիս այս մի հաւատս  
ընծայել

Բանից՝ զոր ահ և սպառնալիք թե-  
լադրեն :

Մ . Գօշ . ԾԸ .



## ԱՌԱԿ ԻԵ

ՎԱՐՈՒՆԿ ԵՒ ՍԵԽ

Առ 'ի չգոյէ կատարելոց դտանեն  
 թերիք մեծարանա :

Վարունկ հատեալ 'ի սլարտիղէ  
 երախայրի 'ի ճաշակ,

Ի խրոընտալ ընդ ատամամբք կե-  
 րողի,

Պանծայր 'ի համ իւր և 'ի հոա  
 որակս զազնիւս 'ի մըրդաց :

Այլ 'ի սեխէ սագըտեալ՝ յանհամ  
 այնուհեան գըղմենիս

Իշխէ սլարծեւ, ջև ձըմերկի և սե-  
 խի

Եւ քաղցրահամ սլրաղոց 'ի վեր  
 երևեալ :

Մ • Գ • Ե • Ծ • Թ •

## ԱՌԱԿ ԻԶ

ԹԱՐՈՐ ԵՒ ՀԵՐՄՈՆ ԵՒ ԱՅԼԻ Ի  
ԼԵՐՄՆՅ

Իւրաքանչիւր ոք 'ի լերանց սլան-  
ծայր երբեմն յիւր 'ի փառս .  
Պոնտոս 'ի Յոյնս , Եանէ հրաշուենչ  
և Պալէստին 'ի Վարսէլ ,  
Տապանակաւն 'ի Հայս Մասիս , և  
'ի յԱղուանրս Վաւիսս ,  
Ի միջնահայս Տաւրոս , և յայլս  
աշխարհաց այլք 'ի լերանց ,  
Այլ իբրև ձայն ետուն Թաքոր և  
Հերմոն ,  
Խոնարհագոյնք քան ըզնոսսա Աս-  
տուածահրաշ մեծարեալք ,  
Ամենեքեան առհասարակ լռուցին :  
Ըզգիւցազանց յանդիմանէ ա-  
ռակս ըզսին պերճութիւն .  
Զի գլէ զնոսսա հոգի խոնարհ , Աս-  
տուած 'ի նմա թէ բնակէ :

Մ . Գ . Ե . Կ .

## ԱՌԱԿ ԻԷ

ԳԵՏԻ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆ

Նոյնպէս և գետ իւրաքանչիւր նա-  
խագասէր զինքն այլոց .

Ի կըրկին վեցեակ առաջս ուղիսից  
Երասիս պանծացեալ,

Եւ Եփրատ 'ի ծաղկաւէտ ամուսնա՝  
ուր գնայ ճոխաճեմ .

Ի յոսկեբեր ալիս Փասիա, և յերփ-  
նադեղ 'ի փասեանս՝

Որ առ եղերբ նորին գրնան ճարա-  
կաւորք ընդ արօտ .

Նախանձ 'ի Ծուր անտառախիտ  
կայմիւքն արկեալ և Դըկլաթ ,

Եւ այլք դարձեալ յիւրաքանչիւր  
բարեմասին գերապանծք :

Այլ բոլորից գեր 'ի վերոյ զՅորդա-  
նան

Գետոց արքայն Եւրիդանոս գա-  
տեցաւ ,

Վասն ընդ ոտիւք անդ ըզվեշասն  
Աստուածորդւոյն կոխելոյ ,



Եւ սուրբ Հոգւոյն աղաւնահեղալ  
անդր իջման :

Զի՛նք Հոգւոր պարծանս՝ ի կշիռ  
կալ ոչ է մարթ առէից :

Մ • Գ. 02 • ԿԳ •

## ԱՌԱԿ ԻԸ

### ԶԿՈՒՆՅ ԵՒ ԼԵՒԻԱԹԱՆ

Բողոք երբեմն առ թագաւորն իւ  
րեանց բարձին ազգ. ձրկանց •

Թէ զմեզ որսան ահա մարդիկ, լու  
կեն՝ ի հուր և ի սուր,

Եւ զի՛ դու վրէժ՝ ի նոցանէ ոչ առ  
նուս :

Եւ սղոցաձկան հարեալ ըզնաւ ձրկ  
նորսաց,

Արար զյոգունս ի նոցանէ խորա  
սոյզ :

Զաղմուկ գընդին լուղականի ցա  
ծուցեալ

Յայնժամ այսպէս Լևիաթան ետ  
պատգամ •

Ո՛չ իսկ գիտէք զի եմք ի սպաս  
ազգի մարդկան սահմանեալ :

Օրինաւոր թագաւորի հնազան-  
դէլ

Ուսուցանէ առակս այս ,

Եւ մի ընդդէմ ճակատադրի նըշ-  
կահել :

Մ. Գ. 2. 45.

## ԱՌԱԿ ԻԹ

ԲԱՌ ԵՒ ԽՂՈՒՆՁՆ

Ողորդէր բաղ ըզխողընջուն ասելով .  
Արի եկ ո՛վ խողընջունի , ցօղէ անձրև  
ցօղագին ,

Ե՛լ դու արտաքս 'ի ճեմ՝ զի զքեզ  
պատուեցից :

Իսկ նա ասէ . Չիք իմ առ այլս ըղ-  
քեզ տեսալ պատուասէր ,

Եւ իբր առ իս յանկարծակի լի-  
նիցիս ,

Բայց թէ զցրուկ քո կափկափես  
արեան իմոյ ծարաւի :

Ասաց և խոյս ետ ամրացաւ 'ի զրա-  
համարթ պատենին :

Խրատէ առակս ըզգուշանալ 'ի  
ստապաախր շողոմից :

Մ. Գ. 2. 46.

## ԱՌԱՎ Լ

ՊԻՆ ԵՒ ԽԵՉԱՓՍՈՒ

Չիք ամբութիւն ընդդէմ հնարից  
չարութեան :

Ամբածածուկ 'ի զրահամորթ  
պատենին ,

Չայն տայր Պինա առ ոխերիս խե-  
չափառ ,

Որոյ ճապուռք ոչ փեռեկել բրունի  
ղխեփորըս նորին ,

Եւ ոչ զօրեն երգիծանել 'ի խեցին :  
Քաղց 'ի ճարակ որսոյ և բաղձ լու-

սատենչիկ հարկ առնեն

Խեցեմորթին յետոյ ապա բանալ  
զամբոցն ամբափակ .

Խիճ 'ի խրամատն ոսոխն յայն-  
ժամ դարանամուտ արկանէ .

Եւ հնարիմաց ճարտարութիւն ճա-  
րակի զօրսն գողտրիկ ,

Ոչ ժամանեալ պինասպասիկն նը-  
մա ըզգաւն ազդ առնել :

Մ . Գօշ . ՀԳ .



## ԱՌԱԿ ԼԱ

## ՅՈՒԼ ԻՆՖՆՈԳՈՐ

Յանդրդնու թիւն յաճախ 'ի վաանդա  
ըղգճնանալ ուսանի:

Յուլ յոգորել իւրում եհար  
ուժդին ղեղերս ըղգեանի,  
Եւ խորտակեալ դրտաւ անշուք ա.  
պաղէն.

Ի բուսանել ապա անդրէն վըիժա.  
կին,

Ուսաւ մի ևս այնուհետե հողահա.  
նել եղջերօք:

Մ. Գ. օ. շ. չե.

## ԱՌԱԿ ԼԲ

## ՀՕՏ ԵՒ ՎՈՀՄԱԿ

Չանդործ վաստակ պահապանին և  
ըղյարդ

Յարհամարհել քո ծանկեա անա.  
դան:

- Համախորմբեալ ընդ հովանեաւ  
 անտառաց ,  
 Խորհուրդ առին ազգ միամիտ ան-  
 դէոց ,  
 Իրաւաստոհ լինել ընդ գայլս ոխե-  
 ըխնս ,  
 Զի մի յանդուծ մըսավաճառս և  
 նոքա  
 Դահիձք հակիրճ կենաց իւրեանց  
 յաւելցին :  
 Յալևորաց անդ ոմն յայծից բարձր  
 'ի վիմէ ետ խրրատ ,  
 Մի զսարղամիա բարուց իւրեանց  
 ըզփորձ առնուլ վերըստին ,  
 Ի վաղընջուց և յանըսպառ ականէ  
 Դոցա անհաշտ ատելուծիւն իջա-  
 նէ :  
 Արհամարհեաց որպէս սուրբ է  
 մանկտին  
 Ըզճերունւոյն՝ անփորձն ըզխրատ  
 խոհական .  
 Եւ միաբան սլատդամաւորս 'ի հօ-  
 տէն  
 Ընտրէ զվըրախաս ոմանս , զի մի որ-  
 սին դէր  
 Ըզգաղանացն հրասպուրեացէ որկո-  
 թուստ ,

Իրաւանց ազգաց դրրժեալ ամսա-  
րըշտել 'ի հրեշտակս :

Գան յանդիման լինին նոքա ատե-  
նին .

Լըսէ վոհմակն , և զայս նոցին տայ  
պատգամ .

Ըզհեռ գիւրին է լուծանել զազ-  
գային ,

Եւ ընդէր իցէ ատել մեզ զազգի  
անդէն և հըլու ,

Եթէ 'ի բաց ըզխուովայոյզ շընեարդ  
և եթ վարիցէք :

Նոցա զգիւրին պայմանն իսկոյն  
յանձն ատեալ ,

Այն ինչ 'ի բաց ըզազահապանս ար-  
ձակեն ,

Յայնժամ հասնել հաւատադրուժքն  
'ի վերայ ,

Տան ամսարիշտ ժանեացն ըզհօան  
'ի ճարակ :

Մ . Գօշ . ՀԹ .



## ԱՌԱԿ ԼԳ

ԽՈՅ ԵՒ ՄԱՅՐԻ

Խոյ եղջերօքն հարեալ ըղմայր հապ-  
րասէս,

Թափէ զնոսա, և զծառն առնու ա-  
նիծանել առ զայրոյթ :

Ում 'նա' ֆեղէն, ասէ, չարեաց քոց  
առիթ՝

Զի՛ ինձ 'ի զուր դու անմեղիս մե-  
ղադրես :

Առաիս 'ի խրատ է ասացեալ այ-  
նոցիկ,

Որք յայլս ըղմասա ախտից խրեանց  
արկանեն :

Մ • Գ. 02 • 2Ա •

## ԱՌԱԿ ԼԴ

ԳԱԶԱՆՔ ԵՒ ՄԱՐԴ

Արժանաւոր պատուհասի է անի-  
րաւ բրոնութիւն :

Առիւծ և արջ 'ի միասին ընդ  
գայլոյ

Աղատորէն կամեցան կեալ, և ա-  
սէն .

Ընդէր լինիմք մեք խրժաբար հրմա-  
կերք :

Ըմբռնեացուք 'ի մարդկանէ զոք  
խոհեակ ,

Խոհակերել ըստ օրինի իւրեանց  
'ի ճաշ զորսրս մեր :

Հանպա կալեալ զոմն արարին խորա-  
կարար .

Պակասէին շամիուրք շողղացրն  
կուտելոց հանասլազ ,

Մարդ և երէ վայրի և խաչն և ան-  
դեայ

Որկորըստեան բաղմահանին զոհե-  
լով :

Ոչ հանդուրժեալ առնին՝ ծանու և  
վտանգաւոր վաստակոյն ,

Եհերձ փայտ մեծ , և յեռեալ սեպս  
յերկաքանչիւր 'ի կողմանս ,

Ասէ ցառիւծն և ցայլ դազանս եր-  
կոսին .

Օգնեցէք ինձ 'ի պատառել ըղկարծ-  
րատորրր մայրիդ ,

Արկէք ըզձեռս 'ի ներքս , ուժգին  
ձրգեցէք :

Իբրև արկին նոքա զթաթուլս 'ի կո-  
ճեղ ,

Ոստոյց զերթիս . և յրմբրոնել 'ի  
մնալ նոցա անփախուստ ,

Տապար 'ի գործ արկեալ 'ի վրէժ  
'ի նախձիր ,

Զըսկիզբն 'ի քէն , ասէ , բեր ծն ա-  
րարից

Ի բրոնաւոր 'ի յելուզակ առիւ-  
ծոյդ :

Մ . Գօշ . 22 .



## ԱՌԱԿ ԼԵ

ԳՍՅԼ, ԵՒ ԱՆԴԵԱՅ

Զի սովորոյթ հնացեալ փոխի 'ի  
բնութիւն ,

Ուսուսցէ զայն առաջիկայս քեզ  
առակ :

Գայլ զառամեալ չողաւ առ հօան  
ասելով .

Ասղաշաւեմ , արբումեցուցի ըզձեզ  
շատ .

Աւել 'ի տան ձերում թողէք ածել  
ինձ ,

Պահ մանկըտւոյդ յայլոց կալայց 'ի  
դայլոց :

Նոքա 'ի գութ շարժեալ ընդ այն ,  
սաստեն շանց

Վարկել մի ևրս ծերունւոյն մեղան-  
չել :

Ընդ հուս 'ի հէնըն զըզայեալ  
զարթեալ քաղց ,

Եւ 'ի սովոր նախձիրս մինչ այն ինչ  
ըզժանիս արկանէր ,

Հասեալ շընեարն ըղնա հաղիւ հա-  
լածեցին խածատմամբ :

Մ . ԳՕԶ . ԶԹ .

## ԱՌԱԿ ԼԶ

ՄԿՈՒՆՔ ԵՒ ԿԱՏՈՒ

Մըկունք 'ի ծերսս հալածականք  
'ի կատուոյ

Համախորմբեալ հրապարակ ,  
Յըղեն հրեշտակ առ նա աղերս առ  
նելով .

Զի՞ մեղանչեմք քեզ որ այդքան հե-  
ռիւ ըզմեզ հալածես .

Զի՞նչ քո ուտեմք : Իսկ նա ասէ .  
Այլ մնասակար էք մարդկան .

Ո՞չ իսկ գիտէք զի առ 'ի սլահ ամ-  
բարոց

Նոքա ընդդէմ գողոցդ ըզմեզ դար-  
մանեն .

Արդ եթէ դուք ոչ մեղիցէք սլաշա-  
րոյ ,

Տացի շըրջէլ ձեզ առ արնին համար-  
ձակ ,

Եւ մի վնասել ինչ ձեղ ահա խոս-  
տանամ :

Ասաց ե զաջ 'ի ձե երդմանս ած 'ի  
դուսխ :

Համարձակեալ յայնժամ մըկանց  
ելեալ արտաքս 'ի ծերպից

Առ 'ի ճարակ հատից 'ի բաց անկե-  
լոց ,

Յեղակարծում հաս ուխտադրումն  
'ի վերայ :

Եւ 'ի բողոք բառնալ նոցին զերդումնս  
'ի յուշ առնելով ,

Նա սրտաճառէր թաթ ըզգըլսով  
ոչ առ երդումն ինչ ածեալ ,

Այլ ընդաբոյս զայն իւր 'ի բնէ  
սովորոյթ :

Որք խիզախեն 'ի վտանգ՝ հաւատս  
ընծայելով սրտերդմանց ,

Նոցա առակս այս ասացեալ է 'ի  
խրատ :

Մ • Գօշ • ՂԱ •



## ԱՌԱԿ ԼԷ

## ՆԱՊԱՍՏԱԿ

Հարցեալ երբեմնն նասպատակ  
 թէ՛ նդէր այդքան ես երկչոտ ,  
 Ձի դարանին , ասէ , և շունք մեզ և  
 արծիւք և որեար .

Արդ յայսքանեաց շըրջասպտեալ  
 'ի վտանդաց ,

Չիցէ ինձ պարտ զահի մեծի հար-  
 կանեւ :

Ի զգուշութիւն խրատէ հակիրճս  
 այս առակ ,

Որք աներկիւղ կան 'ի վտանդի 'ի  
 թըշնամեաց շուրջ սպտեալ :

Մ . ԳՕՀ . ԴԵ .

## ԱՌԱԿ ԼԸ

## ՈՒՂՏ ԵՒ ՈՒՂՏԱՊԱՆ

Բաղբաղելոյ յաճախ բարուրըս ծու-  
լից ,

Տացէ առաիս այս քեզ հակիրճ յա-  
րացոյց :

Զուրտ յուլացեալ 'ի գնացս ե-  
հար ուղտապան .

Նա պատճառէր չիարել գրնալ առ  
վրշտին .

Ո՞չ տեսանես , ասէ , զպրրիուհս իմ  
տրխրադինըս կախեալ ,

Ո՞չ տեսանես զոտս իմ զի ոչ ածէ  
ձայն :

Ում ուղտապանն յաւել . 'ի բաց  
տար ըզննոտի բաղբաղայս ,

Միշտ իսկ շրթունք քոյին կախեալ ,  
միշտ իսկ են ոտք քո անձայն .

Անդորձ՝ ուրեմն՝ կամք են քեզ կալ  
բարրանօքդ 'ի մշարի :

Մ . Գօշ . ձԲ .

## ԱՌԱԿ ԼԹ

ԽՈՋ ԵՒ ՔԱՂԴԵԱՅ

Խոզի յուսումն երթեալ առ ու  
 տրս քաղղեայց,  
 Գիտել զարփից շորջան, լինել ասա  
 ղաբաշխ,  
 Հրամայեցաւ դիտել զաստեղս երկ  
 նասլիշ.  
 Եւ 'ի չկարելն հայել 'ի վեր ընդ եր  
 կին,  
 Զի ցռուկ 'ի խոյզ ևեթ բլտոյ  
 արւաւ նրմա երկրաբիր,  
 Ուլանն 'ի վեր անշորջելի բնաւո  
 րեալ,  
 Պատգամ նրմին ետ վարժապետն  
 քաղղեայ.  
 Երկրաւորին գոլով քո յար 'ի խըն  
 դիր,  
 Երկնաւորաց վասն այնորիկ չես ա  
 կահ :  
 Ի ճահ առակս այս այնոցիկ սլա  
 տահէ,  
 Որք երկրաքարշ վարեն կենցաղ  
 երկնաւորաց անճաշակք :

Մ • Գօշ • ճԳ •



## ԱՌԱԿ Խ

## ՁԻ ԵՒ ՀԵԾԵԱԼ

Ձի խրոխտացեալ հեատեաց ընդ-  
դէմ հեծելոյ ,

Եւ 'ի շրջել անդ՝ պատահեաց նը-  
մա առիւծ ամեհի .

Այն ինչ անտի լեալ մաղասութի՝  
եւ ընդ առաջ նրմա արջ ,

Եւ ասլա գայլ , և այլ դաղանք ոխե-  
րիմք :

Յայնժամ դարձաւ նա խոնարհեալ  
'ի գոմն անդրէն տէրունի ,

Քան զանտէրունչ աղատութիւն  
լաւ ըղկենցաղ անլրտանդ ,

Լաւ և զճարակ պատրաստական  
համարեալ :

Խրատէ առակըս մըտադիւր կալ  
ընդ ձեռամբն Աստուծոյ ,

Որ կերակրէն , և 'ի դիւին պահպա-  
նէ զմեզ դաւանաց :

Մ . Գօշ . ճՁ .

## ԱՌԱԿ ԽԱ

ԳՈՄԷՇ ԵՒ ԵՐԿՐԱԶԱՓ

Լինել ուսող և երկրաչափ ըղձայր  
 դոմէշ արդմասէր ,

Այլ 'ի չափելուն տաղտկացեալ ան-  
 կաւ 'ի շամբ ինչ մօրուտ .

Եւ իբր անժոյժ յանդիմանեալ յու-  
 սուցէն ,

Միժէ դերկիր միայն արժան իցէ ,  
 ասէ , ինձ չափել .

Կամիմ դօրէն այլոց լինել և ջրա-  
 բաշխ :

Ի դէպ առակս այս այնոցիկ պա-  
 տահէ ,

Որք ըզարդմուտ թողեալ կենցաղ  
 միանգամ ,

Ի սովորոյթ իւրեանց անդրէն առ-  
 նեն դարձ ,

Մեղսասիրաց վարուքն եղեալ 'ի  
 ջրբմեղ :

Մ . Գօշ . ձէ .

## ԱՌԱԿ ԽԲ

ԳՈՄԻՇ ԵՒ ԳՈՄՇԱՊԱՆ

Ըզզարմանիչ իւր կամեցեալ գումշոյ  
եղջերբն հարկանել,

Եւ վասն ողնեալ 'ի բնէ եղջերցն ա-  
պիկար,

Բողոք յայնժամ եբարձ ընդդէմ  
համագոյից մօրն էից,

Զի ոչ հանգոյն ցրու եղջերս եա  
իւր 'ի շեշտ ծայրասուր :

Ում դարմանիչն սաստելով այս-  
պէս ըղնա կըշտամբեաց .

Գիտէր բնութիւն զապառուս կա-  
մրս քոյին,

Վասն այն վրիժակրս քեզ, ող-  
նեալրս բուսոյց :

Ոխակալաց 'ի դէպ առակս ելա-  
նէ,

Որոց Աստուած ըստ չար կամաց  
նոյին չըսաց զէն 'ի վրէժ :

Մ • Գօշ • ձԸ •



## ԱՌԱԿ ԽԳ

ԿԱՏՈՒ ԵՒ ՈՋՆԻ

Որ յանձն 'ի խնամս ամադարըշտին  
եղանի ,

Չանմըտութիւն իւր ողբայցէ ա-  
նադան :

Կատուոյ կեղծեալ գութ ընդ ող-  
նի , թախանձէր

Առնուլ զորդեակ նորին փոքրիկ իւր  
'ի սան :

Եւ մօրն 'ի յանձն առնուլ զայն ,

Յաւել թէ չէ մարթ ըզմանկիկդ  
առնուլ 'ի գիրկըս գրգուել ,

Մերկեա 'ի փշոց , զի կարացից առ-  
նուլ ըզգա 'ի համբոյր :

Ըմբռնեցաւ մայրն 'ի սլատրանա  
ընդ խաբուսիկըն գորով ,

Եւ 'ի յանձնել նրմա զկօրիւն իւր  
անդէն ,

Ելաց զանմիտ վըստահութիւնն 'ի  
ճարակել զայն նորին :

Մ • Գ • Ե • Ճ • Ա •

## ԱՌԱՎ ԽԴ

## ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ ԼՈՐ

Վարուժանի տեսեալ ըզլոր բազմորդի ,

Ուրախակից լինէր նրմա և գոհանայր զԱստուծոյ .

Մինչև լորոյ յոյժ զարմանալ ընդ գուժ նորին աննախանձ ,

Եւ երանել ըզբարեակէր սիրա նորին  
Եթէ ստուգիւ խընդակցելով գոհանայր :

Այլ շահասէր գորով նորին եղև ընդ հուս նըշաւակ

Ի հարկանել նորին ըզմի 'ի ձագուց

Եւ զնա նենդաւ ըմբռնել .

Զի խելամուտ դաւոյ նորին յայնժամ եղեալ , ասէ լոր .

Ահա յայանի եղև զի ոչ թէ քեզսէր ,

Այլ զօշաքաղ ադահուժիւն տայր գոհանալ զԱստուծոյ :

Առակս ըզբարս յանդիմանէ զիշխանաց ,

Որք խորնդակից լինին ընդ ճոխ գոյս  
 ընդ ձեռամբ անկելոց,  
 Յափրըշտակել զայն 'ի մըտի ունե-  
 լով:

Մ • Գօշ • ձփե •

## ԱՌԱԿ ԽԵ

ՇԱՀԵՆ ԵՒ ՀԱՌԲԱԼ

Շահենի յորս թեւակոխեալ կընեւ  
 ըղձագ հաւքալի,  
 Եբրե հաւիկըն խոյս արեւալ զեր-  
 ծանէր,  
 Կա վրէպ յըղձից իւրոց ասէ •  
 Տեառն լիցիս պատարագ:  
 Յայնժամ հաւքալ ծաղր արարեալ  
 ըղնա, յաւել • Անմիտ դու,  
 Որ ինչ ձեռօք մատուցանեա՝ այն է  
 հաճոյ Տեառն 'ի նուէր:  
 Յորժամ ոչ ևս է տէր աղահ ըն-  
 չից իւրոց յեա մահուն,  
 Հարկաւ թողու զայն ժառանգին 'ի  
 հրիտակ:

Մ • Գօշ • ձփե •



## ԱՌԱԿ ԽԶ

## ԲՈՒ ԵՒ ԱՐԾԻՒ

Բու առ արծուի հրեշտակ արար և  
ասէ .

Ի ու 'ի տուրնջեան սրբակն , իսկ էս  
'ի մըթան ,

Ե՛կ խնամեսոս լիցուք , և տուր ինձ  
հարսն ըզդուսորք քոյին :

Նա յեա բազում թախանձանաց  
յանձն էառ .

Եւ 'ի լինել հարսանեաց ,

Ի տուէ լոյս ոչ կարէր վեաայն տե-  
սանել ,

Եւ ծաղը ըզնա խրախճանակիցք  
առնէին .

Եղև գիշեր , և 'ի հարսինն յայնժամ  
'ի գնալ առ խարխափ ,

Յաճախեաց ծաղը , և հարսանիքըն  
լուծան :

Խրատէ առակս առն ընդ կրնոջ  
գալ 'ի սլառչաճ հարսանիս ,

Եւ մի զերդ լոյս ընդ խաւարի տա-  
լադէպք :

## ԱՌԱԿ ԽԷ

ՃՆՃՂՈՒԿ ԵՒ ԱՐԾԻԻ

Ընդդէմ արծուոյ ճընճղուկ յան-  
դուդն ընդվըղեալ,

Սպառնայր ծըրտել յաչքս նորա,  
և զնա առնել կոյր անզօր :

Ի նա և այլք 'ի հստատակաց օդայ-  
նոց

Անխոհականք յարեալ՝ 'ի մարտ խի-  
զախեն :

Յայնժամ արքայն հաւուց դիմեալ  
'ի նոսա,

Առնէ նախճիր փախըստեկցն 'ի ճիւղ  
բառնալ անագան :

Ըղիսօթամիտ ուսիկին յանդուդն  
հեստուժիւն

Յարացուցիւս 'ի դէմս ածել կամե-  
ցայ :

Մ • ԳՕԷ • ՃԻԴ •

## ԱՌԱԿ ԽԸ

## ՀԱՒ ԵՒ ԽՈՂԵԱԿ

Հաւ ընտանի հար, յըմբըրունել ըզնա  
ստացչին, աղաղակ .

Եւ մեղադիր նրմա ոմանց լինելով,  
Թէ զմէ՞ կրուիչըս վայրապար ամբառ  
նայր ,

Ասէ . Զ ի ոչ զիս հանապաղ առ 'ի  
գրդուել ըմբըրունէ ,

Այլ գրլխիվայր ածել երբեմն ընդ  
բաղմօրեայ ճանապարհ

Առ 'ի վաճառ, և այլ երբեմն առ  
'ի խորով արկանել

Չարալըլուկ հիւ 'ի վերայ կայծա-  
կանց :

Յայտ ըզտերանց ոմանց առակս  
առնէ զբարս .

Զ ի ոչ բարիս միշտ է սպասել 'ի  
նոցունց ,

Այլ և չարի ահն ունելով կալ սլատ  
րաստ :

Մ . Գօշ . ձիւ .



## ԱՌԱԿ ԽԹ

ԱՂԱԽՆԻ ԵՒ ՉԱԳՔ ԻՒՐ

Գրդուեալ երբեմն ուրումն ըղձագ  
աղաւնոյ ,

Ըղմիամիտ բարբա նորին գովասաւ  
նեալ ներբողէր :

Ում վարուժնակն • Եթէ ստուգիւ  
զանկեղծութիւն իմ գովես ,

Այր գու , ընդէ՞ր մեղմեխանօք կե-  
նաց իմոց գործես դաւ :

Չանիրաւաց յանդիմանէ առաւիս  
ըզսիրտ անողորմ ,

Որք բարութեամբ առաքինեաց զեղ-  
ծանին :

Մ • Գ. 02 • ՃԻԶ •

## ԱՌԱԿ Ծ

ԱՆԾԵՂ, ԵՒ ԶԱԳՔ ԻՒՐ

Անձեղ յանառա հարկանէ ստէպ  
աղաղակ ,

Մանաւանդ 'ի տեսանելն զոք յօ-  
տար կենդանեաց .

Եւ 'ի ձագուցն հարցեալ թէ 'նդէր  
անլուելի կրուինչէ ,

Զի թըշնամիք արթունս այսպէս ,  
ասէ , ըզմեզ ծանկցեն ,

Եւ մի դիմել յորս 'ի վերաց անըզաս-  
տիցս խշխցեն :

Օգնէ առակս այս արկարաց 'ի  
խրախոյս ,

Զի զգուշութիւն յաղթէ յաճախ  
զօրութեան :

Մ • Գօշ • ՃԼԲ •

## ԱՌԱԿ ԾԱ

ԿՌՆԿՈՒՆՔ

Ըսկիւ թք երկնի երեւական աղգ խոր-  
դոց

Ի դարձ արիււոյն դիմեն յարօտ ջեր-  
մայոտ .

Երկթև 'ի դնալ իւրեանց կազմեալ  
կարաւան .

Գնան տողաբար ամպախաղացք երկ-  
նաչուք ,

Պարառաջից տարմին կարգաւ փո-  
փոխամբ ,

Երկայնաձիգ ուլան միմեանց նեցուկ  
տըտամբըն մըտեալ ,

Օժանդակել միմեանց 'ի թռիչ և 'ի  
կռիչ :

Օրինակաւ խրատեալ հաւուցս  
ուսանիմք ,

Զի դըժուարինքն յաճախ դիւրինք  
եղանին ,

Ուր միաբան առնի վաստակ օգնեալ  
եղբայր յեղբօրէ :

Մ . Գօշ . ՃԽԱ .



## ԱՌԱԿ ԾԻ

ԲՈՒԻՃԱԿ ԵՒ ԲՈՒԷՃ

Բուիճակ ձայնէ հարցեալ զընկեր  
իւր թէ կամս .

Իսկ նա ասէ՝ կամս . և ոչ կայ , այլ  
թեաճեալ այլուր գնայ .

Աստի հաւոյն գիշերայնոյ առեալ կոչ  
չումըն կասկամ<sup>1</sup> :

Որ ՚ի շորթանց ինչ ոք ևեթ խոս  
տանայ ,

Ոչ ինչ ընդհատ խմա զնորայն ՚ի բուի  
ճակին խոստմանէ :

Մ . Գ . Ե . ՃԻԲ .

<sup>1</sup> Ստուգաբանութիւն է անուան թըռչ  
նոյս , որ կոչի և կասկամ :

## ԱՌԱԿ ԾԳ

## ՀԱՒԻՔ ԵՐԳԵՑԻԿԻՔ

Մոխակ, սարեկ, և այլք հանգոյն  
 սոցին հաւիկք երգեցիկք,  
 Ոչ թէ ինքեանք ևեթ նուագել ա-  
 խորժեն,

Այլ և զայլոց սիրեն լսել դայլայ-  
 լիկ :

Ըզար նախանձ յանգխմանէ ա-  
 ռակս այս,

Եւ ընդ շնորհս այլոց խրատէ ա-  
 խորժել :

Մ • Գօշ • ճԽԶ •

## ԱՌԱԿ ԾԻ

ՋԻԱԿԱՆ ԹՌՉՈՒՆ

Ծերսլս 'ի ծառոց փորէ 'ի բուն ձի-  
ական .

Եւ իբրև այն ինչ [Թճնընկէցք խոնա-  
ւուաք

Փուտ 'ի փապարս անդր արկանեն  
որդնածին ,

Յայնժամ զորդուարն ճարակեալ  
պարարի :

Այսպէս դիւին հարեալ ըզսիրտ  
մարդկեղէն ,

Ծնանին անդ մեղք , և ինքն այ-  
նուիկ կերակրի :

Մ . Գ . Ե . ձիթ .



## ԱՌԱԿ ԾԵ

## ՊԱՐ ՄԵՂՈՒԱՅ

Թէ քանի՞օն է առաւել օգտակար  
 Օգնել միմեանց և միաբան 'ի միա-  
 սին վաստակել,  
 Առաջիկայ օրինակաւրս ցուցից :  
 Մեղուաց գործօն պար 'ի ծաղ-  
 կունս համասփիւ,  
 Որ 'ի նարդոս, որ 'ի ծոթոր, որ  
 հոյլ 'ի հոյլ մանիշակ,  
 Բարձեալ բերեն հոյզ ընդ երեկս ա-  
 նոյլ 'ի պան խորրսխին •  
 Արուեստակեն այլք ըզբըջիջ մոմա-  
 կերտ •  
 Աէսք կան 'ի պահ անձուկ դրբան  
 ամբոցին,  
 Այլք զարբայիւ պարունակեալ  
 Թիկնապահք •  
 Աէսք ըզմանկտին ըզյոյս գրոհին դա-  
 յեկեն,  
 Զեկաւորաց ըզբեոն առնուն այլք  
 'ի բաց •

Եւայ վաստակն , 'ի նոյն աշխատ  
եղեալ 'ի գործ բոլորից ,

Եւ նախատեսք ձրմերայնոյ պաշար  
ինքեանց ամբարեն :

Ա յսպէս մըրդուզն այն թրուչնիկ  
Ի հրաշակերա երկոցն 'ի գործ ան  
ձեռնհաս միայնակ ,

Ոչ զիւրն ևեթ 'ի միասին ընդ այլ  
ըզպէտարն լընու ,

Ա յլև հանուրց պատրաստէ բոյծ  
'ի լոյս և մեղք 'ի ճաշակ :

Մ . Գ . Ե . Ճ . Ծ . Բ .

## ԱՌԱԿ ԾԶ

### ՄՐՁԻԻՆ

Ըզգրթուարինս ամէ վաստակ եր  
կայնամիտ 'ի յամբոկ ,

Մանաւանդ ուր միաբան տայցէ  
ժրութիւն ձեռն 'ի նպաստ :

Մըջիւն մըրդուզ 'ի կենդանիս և  
անդօր ,

Ա յլ ժիր 'ի բնէ երկայնամիտ 'ի  
վաստակ ,

Նախահոգ ձրմերայնոյ ածէ ամբարս  
'ի մըթեր ,

Ի ստորերկրեայ հողադարան 'ի բոյն  
իւր :

Սեւագունդ երկայնաձիգ զեռայ ընդ  
արտ կարաւան ,

Բարձեալ անձնիւր շըրթամբն 'ի  
վեր զատոքահատ ցորենոյ ,

Անխոնչք 'ի գնացս ըզհեա միմեանոյ  
գան կարդօրէն տողանի ,

Անդր ընդ երիւր նըրբակածան ըզ-  
բեռն ըստուար բերելով :

Երթ առ մըրջիւնն ո՛վ վատ խրա-  
տեալ յիմասանոյն ,

Եւ լեր ճըճւոյն գործօնէի նախան-  
ձորդ :

Մ • Գ • օ • շ • Գ •



## ԱՌԱԿ ԾԷ

ՍՐՁ ԵՒ ՄՐՁԻԻՆ

Որչափ հըղօր ոք և իցէ, պարտի խի  
թալ 'ի նուաասից .

Ձի հնարիմաց ճարտարութիւն  
յաղթէ յաճախ զօրութեան :

Ըզբոյն մըրջեան զըստօրերկրեայ  
փօրեաց արջ ,

Եւ զնախահոգ արնատեսութեան նո-  
րին եկեր ըզվաստակ :

Յայնժամ երթեալ միաբանէ նա  
ընդ իւր

Գունդ համազգեաց , գունեսիս , բո-  
ուեսիս և պիծակ ,

Տիզ և մըժիխ և բրէտ և այլ նըմա-  
նիս .

Որ կարեկիցք նըմին գիմեալ հար-  
կանեն

Չաչս ըւընդունա և զըսեղիս գաղա-  
նին .

Եւ առ ցաւոցն յորժամ բացեալ  
նորա զբերան իւր գոչէր ,

Նորա 'ի փոր նորին մըտեալ զաղիս  
նորա խոցոտեն :

Մ . Գ. Ե. Զ . ԸԾԴ .

## ԱՌԱԿ ԾԸ

### ՋՈՐԵԱԿ ԵՒ ՏԱՐԾԱՀԱԻ

Տարածանի իբր առաւօտ ընդ երկիր

Ջորեակ ծախիչ ասպատակեալ համապիտ ,

Ապականել զարտ և զայգի և զճառաստան պըտղաւէտ .

Առաջ նորա դրախտ փափկութեան և դաշտ ըզհէտ իւր խոսպան .

Որպէս բանակ հըղօր 'ի մարտ պատրաստեալ ,

Ամենաղօր թագաւորին զօրըն մեծ :

Այլ իբրև այն ինչ առաքի տարմ 'ի նորին հրամանէ ,

Ըզծովափուներս դիակունք նոցա ծածկեն նեխահոտք :

Խեղամըտեմք հոգեպատումս առաւիաւ ,

Ձի՛ստ ներելոյ աստուածախնամ  
տեսչութեան

Ջորաժողովք ազգաց աւար հար-  
կանեն ,

Մինչև նորին ակնարկութեամբ դան  
այլք վանել ըզնոսին :

Մ . Գ . Բ . Ժ . Ը .

## ԱՌԱԿ ԾԹ

### ՈՍԿԻ ԵՒ ՅՈՐԵԱՆ

Յարքունական գրօշեալ ոսկի ՚ի  
պատկեր ,

Խընդրէր ըսպաս յամենեցունց իբր  
արքայ :

Եկին նրմա երկըրպագել հոյլք  
էից ,

Եւ մանաւանդ քրայք հրահալք եր-  
կաթ արոյր և արծաթ ,

Որոց յաղթէ ամենեցուն նա ինքն  
՚ի փայլ և ՚ի գեղ :

Այլ ոչ յանձին կալաւ ցորեան  
գալ ընդ նոսա , և յաւել .



Թող ինքն ինձ նախ դայցէ երկիր  
սպագանել :

Նախամեծար ըզկարեւորն առնել  
խրատէ առակս այս .

Զի սով զարծաթ և զցանկալին ա-  
մենեցուն իսկ զոսկի

Փոխանակել ընդ ցորենոյ առնէ  
հարկ :

Մ . Գ . Ե . Ճ . Կ . Ը .

## ԱՌԱԿ Կ

ԽԱՂԱԽՈՐԴ ԵՒ ՄՈՐԹԵՓՈՐԾ

Որ ըզճանուես առնին անտես արա-  
րեալ ,

Թըչնամանէ զթեթե այլոյ թերու-  
թիւն ,

Ի խրատ իւր զայս համարեացի ա-  
սացեալ :

Մորթեգործի խաղախորդ ոմն  
հանդիպեալ ,

Նախատելով կոչէր ըզնա ժահա-  
հոտ :

Իսկ նա ասէ . Համբերէի մըտա-  
ղիւր ,

Ի քաղցրահոտ իւղեփեցաց թէ որք  
նախատ զիս առնէր .

Այլ իբր իշխես դու մեղադրել  
ինձ նեխահոտորդ քան զիս :

Մ . Գ . Ե . Ժ . Կ . Թ .

## ԱՌԱԿ ԿԱ

ԱՒԱԶԱԿ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

Բարիս յայլոց յանիրաւի սահան-  
ջէ այր չարագործ :

Յաւազակէ յանկարծ երբեմն  
ըմբռնեալ

Քահանայ ոմն , հուժկու բազկաւ և  
արի ,

Կորդեաց ըզսուր 'ի ձեռանէ սու-  
խին ,

Եւ զնա ըզհետ առեալ ձրդէր ուժ-  
գնապիրկ :

Աղաչաւոր յայնժամ զայս գողն  
արկ աղերս .

Խնայեա դու յիս որ հանապազ 'ի  
բեմին

Խաղաղութիւն ամենեցուն քարո-  
ղես :

Ում քահանայն՝ խաղաղութիւն  
արդարութեամբ յաջողէ ,

Ասաց և զիս սուսերբն հանդերձ  
ած աւանդեաց ատենի :

Մ . Գօշ . ՃՀԸ .



# ՆԱԽԵՐԳԱՆՔ

## ԵՐԿՐՈՐԴԻ ԳՐՈՅՍ

Որպէս ըստրուկըն ձերբազատ Աւ-  
գոստեայ

Ըզփուիւգացւոյ ծերոյն զխմաստս 'ի  
չափ տաղի յօրինեաց ,

Ըզպիտանինն ախորժ մըտաց ընծա-  
յելով և ունկանն ,

Ըստ նըմին օրինակի առնուամ ըզ-  
գիրս երկրորդէլ ,

Զհագարացւոյն <sup>1</sup> աստ Եսովկայ  
ոլորելով գիւտս 'ի տաղ :

---

<sup>1</sup> Այս ինքն է Նասրէտինն առակախօս  
Տաճիկ , որոյ են գիւտք առակաց երկ-  
րորդի այսր գրոցս : Բայց զայստօիկ մեր  
'ի լոյս ևեթ և 'ի յուշոյ յիշատակէ ըն-  
կալաք ընտրանաւ . զի ոչ տպագիր ինչ  
ուստեք , և ոչ գրչագիր 'ի ձեռնս մեր ե-

Մի խաղ ըզտաղքըս զայստակի, օ  
 ընթերցող, համարիր •  
 Զի շահեկան ծածկի պըտուղ ընդ  
 փանաքի փեճեկաւ •  
 Իմաստից որ 'ի սոսա թէ դոս խո-  
 ըոց խելամոււ,   
 Ոչ դու 'ի խաղըս կորուսեալ վարկ-  
 ցիա զանգին ժամանակ :  
 Խաղք են այո, այլ զբաղասէր մը-  
 տաց հնարեալ առ 'ի դբոս ,  
 Որպէս խանձիւ պատեալ ձրկանց  
 կարթ, և լարեալ հաւուց վարմ :  
 Զի է բնաւից ախորժեղի պիտանիմ  
 խառն ընդ անոյշ :

---

Հաս մատեան, յորում բովանդակեալ  
 կայցեն ամենայն առակք նորա : Ասան  
 որոյ փախաքելի է մեզ միշտ ունել և  
 զայլս յառակաց նորա . այլ ոչ զդժպհիս  
 սրբասէր լեւեաց , որպիսիք են առաւե-  
 լագոյնք 'ի ծանօթիցն՝ զորս և ոչ արժա-  
 նի գրոցս յիշատակի համարեցաք :

# ՊԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՌԱԿ Ա

ԻՇԱՎԱՐ, ՌԱԾԻԿՆ ԵՒ ԵՍՈՎՊ

Յողովագոյնք 'ի պատշաճից գործին  
անքոյթ առանձին :

Հարեալ ախախ երկայնագի ու-  
րումն էշ,

Ի բոյն որդանց կրելով ըզբեռն ա-  
ւելորդ ,

Ծայրահրատւր խորհեցաւ տէրն  
առնել զայն :

Եւ ըզկրարոցն հատու 'ի ձար ադ-  
ւոյն եդ

Ի խռան ուամիլին , անցաւորաց 'ի  
տեսիլ :

Վէպք 'ի նոցունց խըրատ տային ան-  
ողորմք ,

Հուսլ 'ի յարմատըն զայն կըտրել  
'ի վերուստ ,



- Զ' 'ի սպառ յախտէն լիցի զերծ :  
 Այլք 'ի վերայ հասեալ. Դու զի՞  
 գործես զայդ ,  
 Խնայեա 'ի գրաստ քոյին հէք ,  
 Թէ և յախտէն չարէ հատմամբն  
 ապրեսցի ,  
 Այլ ձիաստացք ըզվատչուէրն ըս-  
 պանցեն ,  
 Եթէ զմիակ զէն իւր առնես անախ-  
 տան :  
 Եւ այլք դարձեալ 'ի գեղ գրաս-  
 տուն խնայէին :  
 Եւ մինչ գեռ այրին վարանէր իւր  
 անաստեղ , իւր լըսել ,  
 Յանկարծ ընդ այն անցանկելով Ե-  
 սովպայ՝  
 Զգոյշ լեր , ասէ , մի զձեա իշոյ հրա-  
 պարակաւ հատանել :

## ԱՌԱԿ Բ

## ՊԱՐՏԱՊԱՆ ԵՒ ՊԱՐՏԱՏԵՐ

Ոչ ինչ ընդհատ քան զազահին հող  
կրծծի ,

Դիւրահաւան շռայլին է յոյս խո-  
տելի :

Ի ստէպ տեսիլ ինքնալըլուկ ա-  
զահին ,

Որ լիգանձիւք տուայտի կարօտ ջը-  
քաւոր ,

Յաւել շռայլ ընդ հակառակըն նո-  
րին

Վասնել ըզգոյս իւր 'ի սպառ ,

Եւ անըսպառ յուսով շահից փոխ  
առնոյր :

Ի պարտատեարց նորին բաղխէ ոմն  
ըզգուրս •

Չէր ինքն 'ի տան , ելանէ կինն ընդ  
առաջ ,

Եւ զնա այսպէս յուսով սնտտեաւ  
ըսփոփէ •

Չէ այլն իմ աստ , ել նա պար-  
տուցն 'ի վրձար : -

Դէպք 'ի բարի՛ ելին նրմա , յո՞ չո-  
գաւ : -

Ի ցանկապաան՝ ընդ որ յաճախ բե-  
ւընբարձք

Անեն դրրասաք երթևեկ ,

Ցախ և մացառ ցանեւ յուզին եր-  
կուստեք

Անցաւորացն 'ի կռիւ քրրձից բամ-  
բակի ,

Որ դնան յուշիկ 'ի քաղաք ,

Մինչ ճօճելով զանգիկ փայլուն 'ի  
յուշան՝

Կարաստեալ կարաւանին ձի ու-  
հորդ :

Ընդ հուպ ածցէ նա ըղկրուռեալս  
անդ ծրւէնա ,

Պատրաստեալ իլ ինձ աղէկատ և  
կարժառ ,

Ըզմանածոյս տալ քեզ ըզսակ՝ յա-  
ծելըն զայն 'ի վաճառ :

Քրքիջ եբարձ այրն ընդ կրնոջրն  
ծաղրելի քաջալեր .

Իսկ նա յաւել . Իրաւասպէս ծիծա-  
ղիս ,

Տեսանելով զարծաթ առ ձեռն  
պատրաստ :



## ԱՌԱԿ Գ.

## ԴԱՍՏԻԱՐԱԿ ԵՒ ՄԱՆԿՏԻ

Չէ բաւական տեսչի՝ նդ մանկունա  
ըզգուշութիւն ամենայն ,

Ձի անխոհեմ խրատու ածէ անձին  
վրտանդ յեղակարծ :

Ոմն յանըզոյշ վարժապետաց  
պատուէր ետ

Ծափա ՚ի փռնեգալ իւրում ծա-  
փել մանկրտոյ :

Աւուրք անցին , անկաւ սափորն ՚ի  
ջըրհոր .

Վարժապետին խոնջեալ կարթիւք  
և ճանկօք ,

Ապա պարան ըստուար առ ինքն  
ետ բերել .

Եւ շուրջ ածեալ զանթովքն զայն  
պարաւանդ ,

Ըզգուշութեամբ իջուցանել զինքն  
՚ի գուք ,

Ձի զգոյնն ՚ի վեր ածցէ անտի զպը-  
ղընձի :

Այլ 'ի վուրնդալ իւրում 'ի յէջս  
անդ յանկարծ ,  
Թողեալ նոցա վաղվաղակի ըզսա-  
րան՝  
Կենդանութիւն նրմա ծափիւք գո-  
չէին :  
Ծանծաղ 'ի ջուրց յայնժամ ա-  
ռեալ նորա ըզգլուխ իւր 'ի վեր ,  
Ասէ անժամ հնազանդեւոցն համ-  
բակաց .  
Ի գէս ժամու , ո՛ր յոյժ հնազանդ  
մանկրտեակ ,  
Կենդանութիւն ինձ մաղթէք :

## ԱՌԱԿ Դ

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Ղեր հանապաղ 'ի կասկածի , ար-  
կածք 'ի կախ կան ըզքե :  
Աստուածախնամ տեսչութիւն  
Ետ աղորւոյ ումեմըն կին երկիւ-  
ղած ,  
Որ ստէս խրատէր զայր իւր 'ի կամս  
երկնից յանձնել զամենայն :



Նուազեաց 'ի տան փայտ 'ի հուր .  
Յերեկոյէ ասէ ցըհարան իւր փե-  
սայն .

Փայտ առ վաղիւ , եթէ պարզէ ,  
գնամ հարկանել 'ի յանտառ .

Իսկ յանկարծ թէ անձրեւէ , պատ-  
րաստեա ղքուրձ ցորենոյ ,

Ածից իշոյն դործ յերկան : —

Պատասխանի ետ նրմա կինն . Յա-  
ւել թէ Տէր կամեսցի : —

Սակայն , ասէ , ջեր կամ անձրե լի-  
նիցի .

Թէ ոչ յանտառ , երթայց յայն .  
Ժամ յաղորիս : —

Իսկ կինն ըննոյն դարձեալ . Թէ Տէր  
կամեսցի :

Դադարեցոյց նինջ ըզլէճ . այգն ըզ-  
գիշեր մերկանայր ,

Արեւածայրք հարկանէին ըզգադա-  
թունըս լերանց ,

Համեսեաց այրն ըզյաւանակ , առ  
ըզկացին և ըզսեպ .

Եւ մինչ երթայրն երգակցելով հիւ-  
րոց մայրից ընդ անտառ ,

Սուրհանդակ ահաւասիկ մուրա-  
կան 'ի յուղւոյն



Ըղգիշերըն զամենայն ընդ անմար-  
 դի շուրջ ընդ վայրս  
 Հեռազօտեալ (որսպէս ոտվոր են այ-  
 լաղգիք) ուղեցոյց,  
 Պատահէ նրմա այգուն • և մերկա-  
 ցեալ ըզսուսեր,  
 Վարէ ըզնա զօրըն ցերեկ տարա-  
 սլարհակ առաջի:  
 Երկայնին ըստուերք լերանց, ցայդ  
 'ի վերայ հասանէ •  
 Վարանի կինն 'ի տան զառնէն զի  
 չև անդրէն առնէր դարձ:  
 Անագանի ապա 'ի մէջ գիշերոյ  
 Բաղխիւն դրբանն յանկարծ լինի  
 լըսելի •  
 Վանդակասպաա 'ի սլատուհանն խ-  
 կոյն ընդոսա կինն 'ի քնոյ՝  
 Չայնէ • Դու ո՞վ ես: Յայնժամ այ-  
 րըն դոչէ •  
 Այր քո, թէ Տէր կամեսցի:

## ԱՌԱԿ Ե

ԵՍՈՎՊ ԱՌ ԶՕՇԱՑԱՂՆ

Հաղարացին Եսովս յանօթ առեալ  
կաթսայ 'ի դրացւոյն ,

Միւս այլ փոքրիկ ընդ անօթոյն ետ  
յետ աւուրց ինչ անդրէն ,

Իբր այն թէ ձագ էր ըլբոցովըն ցընկ-  
նեալ ,

Իբր այն թէ ոչ կամէր զայլոյ ինչ  
խորեւ :

Նա օգտակար պարզմըտութեամբ  
դրացւոյն ղեղծեալ , էառ զայն :

Աւուրք անցին , և միւսանդամ աղա-  
ջեալ ,

Ետ խընդագին , զի ծնանիցի միւս  
այլ թերեւս կորիւն .

Այլ նա դրացւոյն երկայնաւուրըս  
մաղթեաց ,

Որպէս թէ զպարտ մահկանացուի  
էր հատուցեալ հէք սանին :

Եւ 'ի բառնալ նորին բողոք՝ թէ  
իբրը սան մեռանէր ,

Պատասխանի ետ խորագէտ ծերու-  
նին .



Եթէ ծնանի սան, և ընդէր չկցէ  
 նրմա մեռանել :

Այսպէս նա զկոյր նըշաւակեաց  
 տենչ շահու :

## ԱՌԱԿ Զ

### ՀԱՆՃԱՐԵՂ, ԱՆԱՐԳԻՅԱԼ

Ոչ հանձարոյ, այլ մեծութեան  
 ընծայի յարդ 'ի բազմաց .

Եւ մեծարի էշ իշխանին քան ըզ-  
 ոամիկ խոհական :

Ոմն յարեւելա աղքատ յընչկոյ՝  
 այլ մեծատուն հանձարով,

Արհամարհէր ըստ աշխարհին սո-  
 վորութեան 'ի դրացեաց :

Համբերութիւն վաստակարեկ դըր-  
 դեաց 'ի հնարս ըզհանձար,

Առ 'ի նաւթճել յանարդողաց իւ-  
 րոյ փառս .

Եւ 'ի հեծնուլ իշխանին յայց՝ ան-  
 կաւ առ ոարս նորին,

Պաղատելով՝ զի յանցանելն ընդ շու-  
 կայն,



Առ ինքն ըզնա ձայնեալ, տացէ նը-  
մա յիշոցս յունկանէ :

Նորանըշան իղձք պարսաւոյ զար-  
մանք թուեցան իշխանին ,

Այլ ըզխընդիր նորա դիւրին խոս-  
տացաւ :

Աւուրք անցին , իշխանն 'ի սպաս  
չքեղ 'ի ձի ոսկեսանձ

Ընդ շուկամէջն անցանելով զայրըն  
կարդայ յանուանէ :

Ճեպին այսր անդր 'ի կոչ նորին  
ըսպասաւորք հեալով .

Նա մատուցեալ յոսկիազօծն ասպա-  
տանդ ,

Ջոտն իշխանին մեծարանօք համբու-  
րէր :

Յայնժամ իշխանըն խոնարհեալ  
յունկն անձանօթ մըտերմին ,

Ըզխընդրրուածըն լիուլի թըշնամա-  
նօք ընձեռէր :

Վարկեալ կացին ընդ այն դրացեք  
ամենայն .

Եւ խընդագին այրն 'ի կըրպակ իւր  
դարձաւ ,

Անարդանօքըն լեալ կեղծիւք ամե-  
նեցուն մեծարոյ :

## ԱՌԱԿ Է

ԷՇ ԵՒ ՍՏԱՅԻԶ ԻԻՐ

Ի ծառայի քո մի 'ի բախան, այլ 'ի  
վաստակըս նայեա :

Ուրումն իշակ էր յախոռի զա-  
ռամեալ,

Որ զանհրաժեշտ կըրէր զազգին նա-  
խատինա .

Թէ և գործօն և ժիր քան զայլս 'ի  
գրաստուց ,

Եւ կըկոցեալ ահամբ հայէր 'ի հա-  
ճար

Ախոռակցին իւրոյ խըրոխտ նըժու-  
գին ,

Յարդիւ լոկով յագեցուցեալ ինքն  
ըզբաղց :

Սատակի հէքն , և բեռն 'ի ձին յա-  
ւելու .

Մըղեալ փոխան նորին վարի սալա-  
սըմբակն յազորի

Ի սլարագայս յաւերժական շըրջա-  
նին ,



Եւ փափկասունն ընդ անընդել լը-  
 ծովն ընկճի մըտքակեալ :  
 Յայնժամ տէրն 'ի յիշատակ իշոյն  
 յողոց հանելով,  
 Աւօղ, ասէ, դու հաւասար ձիոյն  
 իմոց էիր ինձ :

## ԱՌԱԿ Ը

ՍԱՐԴ ՈՍՏԱՆԻԿ, ՍԱՐԴ ՇԻՆԱԿԱՆ

Ոչ համայնից պատկանաւոր գու  
 ըզկենցաղ արքունեաց  
 Բեր ետովպեան ախորժ կեղծիւք  
 հաւատարիմ արարից :

Երկուք ոմանք սարդք 'ի խընդիր  
 բնակութեան,

Մին 'ի հրապոյր համբաւատենչ  
 ոտանին

Դիմեալ գընայ յարքունիս .

Միւսն 'ի խըրճիթ անփառունակ  
 աղքատին :

Նա խրոխտապանձ 'ի բարեբախտըն  
 նըսէհ ,



Ժիրաժիր երթևեկիւ զոստայն իւր  
 Ձրգէ 'նդ ձեզուանն երկայնաձիգ  
 ասպարէզ ,

Լարեալ ճանճից անըզգուշից զայն  
 'ի վարմ :

Այլ իբրև այն ինչ զոստանեայն աւ  
 ւարտէ 'նա ըզխրշտի ,

Գան հասանեն ըսպասաւորք ար  
 քունի ,

Զերկայնաբուն աւելւս ընդ այգըն  
 ճօճելով 'ի ձեռին ,

Վեր 'ի վայր սրբել մաքրել զասպա  
 րանս .

Ըզտուն հիքին աւար հարեալ ա  
 վերեն ,

Ըզտանուտերն ըստորանկեալ առ  
 'նուն 'ի ժախ ընդ փոշւոյն ,

Եւ 'ի յաղբևս ըզմազապուրն ար  
 կանեն :

'Նա առ ընկեր իւր գայ անախ կորա  
 կոր ,

Որ 'ի յանկեան ուրեք մըթան 'ի  
 հիւղին

Աներկեան կազմեալ իւր տուն 'ի  
 թելից ,

Տածեր որսովքըն վարմելովք ըզնո  
 րածին սերունդ իւր :

Նախանձեցաւ հիւրն ընդ գեղջկին  
բախտ, աւաղեալ զարքունիս .

Եւ 'ի հանդէս անկեան կառոյց իւր  
անդ բոյն :

Աստի խրատեալ աւանդութեամբ  
հայրենի,

Ոչ կըս սարգք 'ի յարքունիս յաճա-  
խեն :

## ԱՌԱԿ Թ

### ՄՈՒՐԱՅԻԿ ԵՒ ԵՍՈՎՊ

Ի ճահ իւրումն անմշտութեան  
խրատել զանմիան է արժան :

Հագարացին երբեմն իւր տուն  
կառուցանէր Եսովպոս :

Առ շինուած ուն ըղկայ առեալ մու-  
րացիկ ոմն անցաւոր,

Բարձր 'ի տանեացն 'ի վայր կոչէ  
զճարտարապետն ըստխալաւ :

Նա ընդ խարխուլ սանդուղս 'ի վայր  
ճրգամբ մեծաւ իջանէ .

Եւ իբրև գայ, ողորմութիւն 'ի  
նմանէ



Վարկառելով զաջ մուրացիկըն խըն-  
դրէր :

Յայնժամ ըզհետ իւր 'ի վեր  
Ընդ նոյն սանդուղս ըզնա նովին տա-  
ժանամբ

Ածեալ մինչև անդր 'ի տանիս , տակ  
ցընա ծերունին .

Լընուլ լցցէ տէր ինքն ըզպէտըս քո-  
յին :

---

## ԱՌԱԿ Ժ

### ԵՍՈՎՊ ԵՒ ՌԱՄԻԿՆ

Նոյն ինքն և այլ երբեմն այլուր  
կանգնէր տուն .

Եւ 'ի տանեաց անտի սկըսեալ հիմն  
արկանել շինուածոյն ,

Զորմս 'ի վերայ նոցին 'ի վեր ամբառ-  
նայր :

Վայր զարմացեալ մարդիկն ընդ  
այն անցաւոր .

Եւ 'ի զվասնէրն հայցել ուրումըն  
զերին ,



Պատասխանէ նրմա ըզգօն ծերու-  
նին .

Զի 'ի յամբողջ այն ինչ ըզտուն իւր  
ածեալ ,

Կին հանդերձեալ էր ածել .

Եւ կնոջն զայն յեղաշըրջեալ վեր  
'ի վայր ,

Զօրինաւոր յայնժամ առնոյր  
տունն ըզգիր :

Յայտ իմն այսու բանիւ առնէր  
ծերունին .

Ոչ սակաւուց 'ի կանանց

Զօրէն և զկարգ տան վեր 'ի վայր  
տապալել :

## ԱՌԱԿ ԺԱ

### ՏԾՃԻԿ ԵՒ ՈՒՐՈՒՐ

Շարժէ անմիտ վրէժխընդրութիւն  
ըզծիծաղ :

Ըզձեռանէ կախեալ սիղիւ լեարդ  
գառին

Ածէր 'ի տուն իւր 'ի տաճկաց ոմն  
'ի յեփ ,

Այլ անհրմուտ 'ի համեմէլ զայն  
'ի ճաշ,

Ի սպանդանոցն հայցէ զնուսխայ  
Եփոյին,

Եւ յեղընգան բուծոյ մատին, որ  
պէս սովոր են տաճիկք,

Գըրէ որ ինչ մըսավաճառն սաղ-  
րէր :

Արդ մինչ 'ի դնալն իւրում առնոյր  
ընթեանըլով զայն 'ի միտ,

Ուրուր յանկարծ յերկնէ 'ի վայր  
խոյացեալ,

Ի ձեռանէ անըզգաստին յափրշտա-  
կէ զճաշն 'ի բաց :

Յայնժամ նորա փութանակի ջըն-  
ջեալ զեղունգն իւր 'ի լէզ,

Չայնէր ըզհետ ուրուրին՝ Երթ,  
ո՛ր անմիտ դիտ ըզնուսխայն,

Խահագործել, եթէ կարեա, զորս  
քոյին :

## ԱՌԱԿ ԺԲ

## ԷՇ ԵՒ ԴԻՈՍ

Ըղկանխակալ բառնալ 'ի բաց ըղ-  
 կարծիս  
 Քանի՞ն է դրժուարին՝ եցոյց Նսովալ  
 առակաւս :  
 Բողոք երբեմն եբարձ իշեանն առ  
 Ղիոս ,  
 Ասն անիրաւ դանից՝ զոր կրեն 'ի  
 տերանց ,  
 Ուր առաւել քան ըղձիանն ըսպաս  
 նոցին հարկանեն ,  
 Մըղեալք 'ի բեռն , վաստակեալք  
 յաղորիս ,  
 Եւ շատացեալ սակաւապէտ դար-  
 մանով :  
 Յարդար աղերս նոցին Ղիոս խոնար-  
 հեալ ,  
 Այսպէս յայնժամ արար նոցա ի-  
 րաւունս .  
 Զի զժուլութեան ձերոյ կարծիս ,  
 Թէ՛ սլարտ և Թէ՛ տարասլարտ ,



Չկարեն մարդիկ 'ի բաց դընել առ  
 'ի խնայել 'ի խըթան ,  
 Յաւելից մորթ ձեզ կարծրատորր  
 անըզգայ ,  
 Գող անընդոստ 'ի մըտրակաց ու 'ի  
 գանից :

ԱՌԱԿ ԺԳ

ԳԵՂՋՈՒԿ ԸՆԴ ԸՆԿՈՒՋԵՍԻ

Իմաստութեամբ և խորհըրդով աւ  
 րար բնութիւն զամենայն :  
 Ընդ հովանեաւ ընկուղենուոյ ըն  
 կողմանեալ շինական ,  
 Եւ դբարձրաձաղկ ծառոյն ըզմիրգ  
 սըն դիտելով փոքրրկունս ,  
 Ուր մեծափոր դըղում 'ի ծիլ նըր  
 բենի  
 Անդ առ արմին նորին աճէր ուռու  
 ցիկ ,  
 Քանի , սակ , սա առաւել ճահաւո  
 րէր 'ի ծառին ,  
 Եւ փոխանակ դըղմոյ ընկոյզն 'ի  
 ծըղին :

Այլ մինչդեռ բանքըն դեռ կային 'ի  
 բերան ,  
 Մի յընկուզաց անտի անկաւ յըն-  
 կողմէլոյն 'ի ճակատ •  
 Յայնժամ 'ի միտս եկեալ՝ Շնորհք ,  
 ասէ , խնամոց արարչին՝  
 Որ 'ի բարձու անդ եդ ըզմիրդըն  
 մանրիկ •  
 Զի եթէ զմիւսն էր անդ եդեալ  
 բարձրաբերձ ,  
 Արդ ըզճակատ իմ յանկանեւըն ջաղ-  
 ջախէր գրչսովին :

---

## ԱՌԱԿ ԺԴ

ԻՇԽԱՆ ԵՒ ՄԵՌԵԱԼ

Զի յիշխանաց բարեաց է բախտ  
 աշխարհի ,  
 Յայտ առահաւս այսուիկ արար  
 Եսովպոս :  
 Ի տաճկաստան , ուր և ուամիկն  
 'ի դահ յաճախ ամբառնայ ,  
 Թաղաւորէր յանուպայից ոք ոչ 'ի  
 սպառ անհանձար :

Մա 'ի միում աւուրց դիպեալ մե-  
ռելոյ ,

Մինչ գազաղաւ ըզնա բարձեալ  
տանէին ,

Էջ 'ի ձիոյ , և խոնարհեալ յունկըն  
դիոյն՝ Տար , ասէ ,

Զըրոյց յանտիս եթէ հարցցեն զաշ-  
խարհէս .

Ասա թէ ես թագաւորեմ , թող աս-  
տի

Ի միտ առցեն ըզհայրենեացն հիբու-  
թիւն :

## ԱՌԱԿ ԺԵ

### ԵՍՈՎՊ ԵՒ ԴՐՄՅԻՆ

Հաւատարիմ զանբան քան զայր  
սրտախօս

Եցոյց Եսովպ այսպէս զայս յինքն  
առակեալ :

Զէջ 'ի գրացւոյ իւրմէ հայցեալ  
ծերն 'ի փոխ ,

Զէ գրասան 'ի տան , ասէ , տայի  
մըտադիւր ,



Թէ չէր յըղեալ ըզնա վաղքաջ յա-  
ղորիս :

Եւ մինչ ասէրըն զայս , խանչիւն  
յանկարծակի 'ի դոմոյ

Վեալ լըսելի՛ յաւել գրացին . ԱՅԼ  
ահա

Խանչէ գրրաստն 'ի դոմի : Յայնժամ  
ըզգօն ծերունին .

Գրաստուն ուրեմն , ասէ , քան ինձ  
հաւատաս :

## ԱՌԱԿ ԺԶ

ԵՍՈՎՊ ԵՒ ԿԻՆ ԻԻԲ

Զի 'նդունելի է խրատ յուսմէ և  
կցէ ,

Յանձնէ առ այս տայ Եսովպոս օրի-  
նակ :

Ամբաստանեալ և դատախազ կա-  
ցին երբեմն յատենի .

Գատախազին նախ իրաւունս ետ  
ծերունին ունկրնդիր .

Եւ 'ի խօսել միւսոյն յաւել տալ  
և նրմա իրաւունս :

Յայնժամ կրնոջ նորին որ անդ կայր  
 'ի լուր ,  
 Ասարկելով թէ իբր երկուցն իսկ  
 էր ունել իրաւունս ,  
 Պատասխանի եա ծերունին . Են  
 իսկ և քո իրաւունք :

ԱՌԱԿ ԺԷ

ՆՈՅՆՔ ԴԱՐՁԵԱԼ

Օրինակաւ ուսեալ խրատիսք Եսով  
 պայ ,  
 Տոյժ յանձն առնուլ քան կալ ան-  
 դործ սարասպորդ :  
 Ի տուրևառ ձրւոց երբեմնն սլա-  
 րասէր ծերունին ,  
 Դանդաց երկից գրնոց առեալ ձու-  
 կրրկին ,  
 Երկուց դանդաց տալով անդրէն  
 զերեսին :  
 Եւ 'ի հեգնել կրնոջն ըղնա թէ զն  
 բազում առնէր շահ ,

Շատ խոկ և այն, ասէ, լիցի մեզ  
 'ի շահ,  
 Զի զմեզ տեսցեն այլք ըզբաղեալս  
 յառևտուր:

## ԱՌԱԿ ԺԸ.

### ԵՍՈՎՊ ԵՒ ՊՄՐՏՄՏԻՐՆ

Լաւ է զգենուլ աղքատ, քան գոլ  
 սարտապան:

Խրատեալ երբեմն յիւրոց անախ  
 բարեկամաց Եսովպոս,

Զի չէր վայել շքըջել նրմա սատա  
 ռատուն ըզգեստուք,

Որ հանձարովն էր բոլորից մեծա  
 րոյ,

Բարւոք խրատէք, ասաց, և ել 'ի  
 շուկայն

Աննելիւր ձորձրս վայելուչս սար  
 տեօք:

Յեա ոչ բաղուամ աւուրց մինչ կայր  
 յակըմբահոյլ Ժողովի,

Գայ սահանջել դերձակն ըզգինա  
 ըզգեստուն,



Ըստպառնալով յըղել առ նա եկա-  
կոչ :

Յայնժամ յամօթ լեալ ծերունին՝  
Ո՞չ, ասէ, այսր աղադաւ

Պատառատուն յանձն առնուի շըր-  
ջել քան դո՛ւ սլարտապան :

## ԱՌԱՅ ԺԹ

### ՍՏԱԽՅՍ ԵՒ ԴՐԱՅԻՔ

Որ ոք ըզլատ խաբէութեան յանձն  
առնու զկեղտ միանգամ,

Ոչ ևս իցէ հաւատարիմ թէպէտ  
և ստոյգ խօսեցեալ :

Կըռուասիրի կընոջ ուրուք այր  
'ի խռովելն ընդ նրմա,

Չայնէր ըստէս ընդ սլատուհան  
իւր ըզգրացիս յօգնութիւն,

Իբըր թէ դան հարեալ յըմբոստ 'ի  
կնոջէն :

Նորա դիմեալ յաճախ 'ի տուն անդր  
և ելեալ 'ի դերև,

Ասլա յաւուր միում 'ի կնոջն առ  
զայրոյթ

Ռիմեղ 'ի նա ստուգիւ խանձող 'ի  
ձեռին ,

Իբրև դարձեալ նա ըղղրացիսրն  
ձայնէր ,

Ոչ որ ուստէք եհաս նրմա յօգնու  
թիւն ,

Եւ զանցեւոցրն սըտութեանց այս  
պէս հատոյց նա ըզվրէժ :

## ԱՌԱԿ Ի

ՆԵՐՔ ԵՐԿՈՒ ԱՆԽԱՂԱՂԱՍԻՐՔ

Արմատաքի քարձ ըզսատձառն  
դրժտութեան 'ի միջոյ :

Եղբարց երկուց հարսուէք 'ի  
կուի յար ընդ իրեարըս գային ,  
Վասրն միոյն ցանցառ 'ի բնէ ատա  
մանց ,

Վասրն միւսոյն քարձ և կարճիկ  
գիսակաց .

Ձի զսա ճաղատ թըշնամանեալ կո  
չէր նա ,

Միւսն ատամնատ թըլուատ ըղնէր  
իւր 'ի վրէժ :

Ոչ ինչ ողորք և խրատ արանցըն՝  
 զօրելով առ նոսա ,  
 Ատամնախիլ մին ապա զկին իւր ա-  
 րար ,  
 Եւ զգէս կրնողըն կարճ՝նովին միւսն  
 եհատ .  
 Լըսեցուցեալ այսպէս ըզվէճ՝ն առ  
 տրնին :

## ԱՌԱԿ ԻԱ

### ԿԻՆ ՀԵՏԱՔԻՐՔԻՐ

Կըսիւ 'ի տան դրացւոյ 'ի լուր Եսով-  
 պայ  
 Հանապազօր դըրդեալ ընդ այր և  
 ընդ կին ,  
 Կընող Ծերոյն մարմաջէր սիրտ հե-  
 տաղօտ  
 Գիտել վասն էր վիճաբանեալ կը-  
 ոուէին .  
 Իսկ ծերունին խրատեր՝ 'ի վէճ՝  
 առն և կընող մի խառնիլ :  
 Յերեկոյի միում չև առն 'ի առն  
 իւր դարձ արարեալ ,



Գընայ կըռուոյ նոցին անժոյժ կինն  
'ի զնին ,

Մինչ յարձակէր զայրազին այրն 'ի  
կին իւր ցուպ 'ի ձեռին .

Յայնժամ զայրոյթ այլ ընդ այլոյ  
ըզկին դրացւոյն կարծեալ զիւր ,  
Առնէ ըզնա սաստկահարուած գա-  
նածեծ ,

Մինչև հազիւ կարել նրմա առնել  
անդրէն դարձ 'ի տուն :

Անդր 'ի վերայ հասեալ ծերոյն և  
լըւեալ

Որ ինչ կընոջ իւրոյ կըրեալ զըս-  
տունդանացն էր պատիժ ,

Ըզնոյն յաւել նրմա 'ի խրատ վե-  
րբատին .

Կին դու 'ի կռիւ առն և կընոջ ու-  
սիր ժիւ ևըս խառնիլ :

## ԱՌԱՎ ԻԲ

## ԵՍՈՎՊ ԵՒ ՆՍԻՍՎԱՐ

Նաւարկել դէպ եղև երբեմն Եսով  
 պոսի ընդ Վոսիտր ,  
 Եւ արկ հընգից դահեկանաց սակ  
 ընդ տաճիկ նաւասուոյն :  
 Նա աջողակ հողմոյ սլարղեալ զառա-  
 դաստ ,  
 Հասոյց ըզհիւրն 'ի դէմ եդեալ  
 վայրն առանց թի վարեւոյ .  
 Եւ 'ի խընդրեն ըզսակ վարձուն 'ի  
 նմանէ ,  
 Հողմ 'ի կտաւին , ասէ , շընչեաց և  
 զնաւն ալիք մըղեցին .  
 Թէ դու և ես նաւարկեցաք հաւա-  
 սար ,  
 Զի՞ դու յինէն խընդրես վարձ :  
 Յայտ առահաւս այսուիկ արաթ  
 ծերունին ,  
 Ի՛բր անարժան վարձուց ռամիկն  
 համարի զերկ հանձարոյ :

## ԱՌԱԿ ԻԳ

ԵՍՈՎՊ ԵՒ ԷՇ ԻԻՐ

Հեծեալ երբեմն Եսովպ յիշակ իւր  
 դէմ եղեալ յայգեստան ,  
 Ըզկայ էառ էչն յամառեալ ՚ի յուղ-  
 ւոջ :

Եւ ՚ի ձայնել վերելակին մըտրակ  
 ՚ի կուշտ առնելով

Տի հանպա ծն , նա յետս ընդդէմ ըն-  
 թանայր :

Յայնրմ վայրի բարեկամաց ոմանց  
 ծերոյն հանդիպեալ ,

Ըզդէմ ուղւոյն հարցանելով յո՞ եր-  
 թաս ,

Պատասխանի ետ ծերունին . Ես  
 յայգեստան , էչն ՚ի առն :

Յայտ իմն այսպէս արարեալ ,  
 Զի ՚ի խեռել հրպատակաց՝ ջկարեն

ինչ կամք իշխանին :



## ԱՌԱՎ ԻԴ

## ԵՍՈՎՊՈՍ ԵՒ ՇԱՀԱՊ

Ի գնալ երբեմն Եսովպոսի՝ շահապ  
 երկրին հանդիպեալ,  
 Եհարց թէ ո՛ւր գիտեալ գընայր ըս-  
 տիպաւ .

Պատասխանի ետ ծերունին չըգի-  
 տել :

Ընդ որ իշխանն ցասուցեալ իբր  
 թէ խաղ զինքն առնէր ,

Ածել իւրոցն ըզնա՝ ի բանտ հրա-  
 մայեաց :

Յայնժամ ծերոյն ձայնեալ ըզհետ  
 իշխանին՝

Այժմիկ ահա դիտեմ, տակ, զոր  
 հարցերդ .

Զի գնամ ահա ետ ՚ի բանտ :

Խրատէր այսուիկ ծերունին ,

Զի ոչ ըստ միտքս մեր գիպին իրաց  
 էլք ,

Այլ որպէս զայնքս կամք երկնից  
 տնօրինեն :

## ԱՌԱԿ ԻԵ

ԵՍՈՎՊՈՍ ԵՒ ԳՈՂԲ

Ազգողագրոյն է խրատ ողորք քան  
ըզսաստից կըշտամբանս :

Գողոց ըզառն Եսովպոսի կո-  
ղոստեղով գիշերայն ,

Ընդոստ 'ի քնոյ զնոսա այսպէս ա-  
մաչեցոյց ծերունին .

Չև ժամանակ չու առնելոյ է ո՛  
արք ,

Ըզկարասին իմ՝ ձեզ կանխիկ յայն-  
ժամ կըրել ծանուցից :

## ԱՌԱԿ ԻԶ

ԵՍՈՎՊՈՍ ԵՒ ՎԱՐՍԱՎԻՐԱՅ

Նոյն ինքն ըզնոյն յաւել այլազգ  
յայտ առնել :

Վարսավիրայ անվարժ երբեմն  
ըզգլուխ նորին սափրելով ,

Դառնահրսկի՞ծ ցաւս ածելեաւ նը-  
մա սայր :

Յայնքամ վայրի բառաչելով եղն ընդ  
դրուէ՛ն անցանէր .

Եւ հարցանէ վարսավիրայն թէ  
ընդէր

Այնպէս արջառն աղիտղորմ կող-  
կողէր :

Յայնժամ ասէ բաղմահամբեր ծե-  
րունին .

Վարսավիրայ թերևս անխորձ ըղ-  
հեքին հերարն վիրայ :

## ԱՌԱԿ Ի Է

### ԵՍՈՎՊ ԵՒ ԿՈՉՆՍԱԿԱՆՔ

Զի ճոխու թիւն յաճախ ուրեք քան  
ըզհանձար մեծարի ,

Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ ա-  
ռակ :

Երթեալ երբեմն Եսովպոս

հրաւիրանաւ 'ի ճաշ ընդ այլ կոչ-  
նականս ,



Եւ զի չէր ճոխ հանգոյն այլոց ըզ-  
ղեցեալ,

Ոչ որ ըզնա սրտուսիրեալ մե-  
ծարէր,

Ոչ ընծայէր ինչ որ նրմա 'ի ճա-  
շակ :

Իսկ միւսանգամ այլուր 'ի ճաշ հրա-  
ւիրեալ,

Չողաւ հանդերձս 'ի փոխ առեալ,  
արկեալ սամոյր մեծագին :

Պրսակէին բաժակք , պաշտէր հա-  
մագամ ,

Եւ ելլելլրս զիրերօք մինչ առնէին  
կոչնականք

Ի սպաս նորին և համեմոց 'ի հրա-  
ւէր ,

Ինքն առ նոսա ըզճորձս յառաջ մա-  
տուցեալ ,

Վերայք , ասէ , ճորձք իմ , սամոյր  
իմ դու կեր :

Յայտ իմն այսպէս արարեալ ,

Զի ոչ վասն իւր ինչ մեծարէր 'ի  
նոցունց ,

Այլ վասն ընչից՝ ճոխ 'ի ձեռոյն կար-  
ծեցեալ :

## ԱՌԱԿ ԻԸ

ԾԱՌՔ ԵՒ ՄԱՅՐԵՒՈՐՔ

Բողոք ընդդէմ մայրևորաց բարձին  
ծառք ,

Մանաւանդ անտառաբնակք ան-  
պրաուղք ,

Ձորոց կարճէ զկենցաղ կացին անտ-  
ղորմ .

Հարեալ աղմուկ և աղաղակ՝ թէ  
ընդէր

Դաշարագեղ երբեմն հաւուց քաղ-  
ցրաձայնից երգարանք ,

Գուպարայաղթք ընդդէմ շանթից  
և մըրըրկաց նահատակք ,

Տապարահար արդ կործանեալ ա-  
ծին 'ի քարշ գիտապաստք ,

Ի հուր արկեալ դատապարտեալ  
'ի շէնս 'ի կայմ 'ի հեծան :

Խոհեմագոյն ոմն 'ի նոցունց յայն-  
ժամ ասէ ծերունի .

Յանիրաւի զմայրևորաց ևեթ բո-  
ղոք հարկանեմք

Եւ զանողորմ երկաթոյ .

Ոչ ինչ նոցա մարթէր վընաս ածել  
մեզ,

Ի մէնջ ինքեանց թէ փայտատոյ չէր  
մեղէիս :

Խրատէ առակս 'ի դպօնու թիւն՝  
մի՛ տալ պատճառքս չարին ,

Քանզի յաճախ անձամբ անձին նիւ  
թեմբ չար :

## ԱՌԱԿ ԻԹ

### ԳՐԱՍՏ ԵՒ ԳՐԱՍՏԱՊԱՆ

Զի դիւրագոյն է առ վայրիկ մի ա  
ռաւել վաստակել ,

Քան թէ նըւաղ՝ այլ վաստակել հա  
նասպաղ ,

Ուսուցանէ զայն առակաւս այ  
սուիկ ըղգօն ծերունին :

Ի գնալ գրաստու ծանրաբեռին  
ընդ զառ 'ի վեր տաժանամբ ,

Եհարց ըզնա գրաստապան ,  
Թէ յերկոցունց ո՞ր այն թըւէր նը  
մա նըւաղ դըժպըհի ,



Ընդ զառ ՚ի վեր տաժանաւոր ելա-  
նել,

Թէ իջանել ընդ գիւրագայթ զառ  
՚ի վայր :

Պատասխանի ետ բեռնակիրն . Ա  
նէճք միուինս և միւսում .

Այլ առաւել անիծեալ գիւրն ա-  
րահեա ,

Որում չիք եզր և վախճան :

## ԱՌԱՎ Լ

### ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Ուղևորէր հանդերձ որդւովն պա-  
տանեաւ Եսովպոս ,

Ինքն հեռեակ՝ յէշ ըզմանուէն հե-  
ծուցեալ :

Անցաւորաց ոմանց տեսեալ զայն ,  
տսեն .

Տեսէք զորդի ստահակ զի գնաց հե-  
ծեալ աւոյգ հասակաւ ,

Հեռեակել հօրն տալով ծերուն-  
ւոյ :

Յայնժամ իջեալ մանկանն , ըզ-  
հայրն հեծուցանէ 'ի դրաստուն .

Անցանեն այլք , անգուժ ըզհայ-  
րն կոչեն ,

Ձի դնայր հեծեալ և զհէք մանուկն  
աշխատ առնէր 'ի տօթի :

Ծերն ըզմըտաւ ած և զորդին առ-  
նուլ ըզհետ իւր 'ի նուս .

Եւս առաւելք յայնժամ 'ի դրաստն  
ողորմեալ ,

Ողնաբեկի արդ , ասեն , արք անո-  
ղորմք հէքն յաւանակ :

Ձինչ ևս առնել էր ըզբերան հա-  
սարակաց առ 'ի խնուլ .

Իջին յերկիր , դնային հետի երկո-  
քեան ,

Ըզգրաստն զհետ իւրեանց անբեռն  
ածելով :

Եւ ոչ այնու պարսաւադէտք լըսե-  
ցին ,

Գարձեալ անմիտըս կոչելով ըզնո-  
սա ,

Ձի գրաստ ունայն զէջն ընդ իւ-  
րեանս ածէին ,

Աստտակաբեկք ինքեանք 'ի դնալ  
առ 'ի խնայումն անբանին :

Այսպէս ուսոյց ծերն ըզուամիկն  
անփոյթ առնել դատաստան .

Զի և զպատշաճն 'ի կրճանել  
կազմ և սխարաստ է սխարասա :

## ԱՌԱԿ ԼԱ

ԻՇԽԱՆ ՅԵՂԱՄԻՏ ԵՒ ԵՍՈՎՊ

Ոմն յիշխանաց , որպէս յողուկք  
էն 'ի նոսա , յեղամիտ

Մերթ կործանէր և մերթ կանդնէր  
ասպարանս .

Էր զի ծաղկոցս 'ի յաբքունիան յօ-  
րինէր ,

Էր զի զծաղկոց յեղամիտսէր 'ի ձի-  
լնթաց ասպարէզ :

Էր իւր յայգւոջ բարձր 'ի բըլբի և  
հողմաղաց հայրենի ,

Ըստ բարեգութ սովորութեան վա-  
ղընջուց ,

Զաղքատանւոյն աղալ ձըրի ըզցո-  
րեան ,

Ետ փլուզանել զայն և 'ի վայր նո-  
րին կանդնել աշտարակ .



Եւ 'ի պարծել նորա անճահս ընդ  
այն՝ յաւել Եսովպոս .

Ըզհողմաղացն՝ ի բաց բարձեր 'ի բըլ-  
րոյդ ,

Այլ կայ և մնայ դեռևս անդ հողմ  
յեղյեղուկ .

Ըզըրջմովիկ կամս իշխանին այսպէս  
խրատեալ ծերունւոյն :

## ԱՌԱՎ ԼԲ

### ԴԱՏԱԽԱԶՔ ԵՒ ԴԱՏԱԻՈՐ

Իրաւախոհ լինել յոռի պայմանաւ ,  
Ընարեւադոյն է քան վիճել յատե-  
նի :

Չըկնորսք երկու 'ի միասին կա-  
լան ըստուար մի ոսարէ .

Մին պահանջէր զայն , զի նախ իւր  
էր տեսեալ ,

Միւսըն զի ինքըն փութացեալ կա-  
լեալ զայն :

Վէճն 'ի յատեան ածաւ , տըւեալ  
Ժիժմակն յաւանդ դատողին :

Արդ երկուստեք մինչ վիճէին դա-  
տախաղք ,  
Նա զսղարարակ միջուկն եկեր ըզ-  
խեցւոյն ,  
Եւ զխեփորիցն ըզմին միում վըճ-  
ուեալ ըզմիւսն ետ միւսում :

## ԱՌԱԿ ԼԳ

### ԿԱՐՈՒԱԿ ԵՒ ԳԵՐՁԱԿ

Ի մեծանալ բարեկամիդ՝ ըզգոյշ լեր  
Մի զնա առ քեզ համարել նոյն ,  
զի փառք ըզբարըս փոխեն :  
Կարուակ աւուրըն պարենի ՚ի  
չահ հաղիւ ձեռնհաս ,  
Սիրով ումեմըն գերձակի էր բարե-  
կամ սիրեցեալ .  
Միմեանց ըզպէտս հարկանէին մը-  
տաղիւր ,  
Սա ըզնորին ըստ պիտոյից ըզհան-  
գերձ ,  
Նա ըզսորին կարկառելով ըզկօշիկ :  
Անուոյ բախտին հոլովելոյ ակըն-  
կալք ,

Որպէս յաճախ այս պատահէ 'ի

Վոսփոր

Վերամբառնալ և սինլըքոր որե-  
րոյ ,

Գաշն ընդ միմեանս եղին յիշել  
միշտ զիրեարս ,

Եւ 'ի նըշան դաշինն' Աս նոյն եմ  
ասել :

Զուարթ 'ի կարուակն հայեցաւ  
բախտ , եկաց երկրորդ արքայի .

Իբազմահոյլ պաշտօնէից շուրջ պա-  
տեալ ,

Բազմեալ փառօք 'ի դահոյս :

Ել յեա աւուրց դերձակն 'ի դուռն  
ուրախակից դոլ նըմին .

Եւ մատուցեալ առ նա , Ես նոյն եմ  
ասէ :

Իսկ բարեկամն , յեղափոխեալ յայն-  
ժամ ըզբարս ընդ նրսէհ ,

Պատասխանէ . Գու թէպէտ նոյն  
իցես , ես չեմ սակայն նոյն :



## ԱՌԱՎ ԼԴ

ԵՍՈՎՊ ԵՒ ԿԻՆ ԻՒՐ

Ձի ոչ է պարտ խրատու կրնոջ գործեւ ինչ,

Ձայն յարկածից իւրոց եցոյց Եսովպոս :

Գարձ 'ի մարտէ 'ի հայրենիան այն ինչ առնէր Ղէնկթամուր ,  
 Խրատ ծերունւոյն տան բարեկամք գրնալ նրմա ընդ առաջ ,  
 Իբր անուանի 'ի քաղաքի անդ իւրում ,

Ձի անողորմ բռնաւորին մի և ինքեան հասցէ մնաս :

Եւ նա առ կին իւր և խորհէր ածել ընդ իւր ինչ 'ի ձօն :

Իսկ կինն ասէ . է սերկելիլ 'ի պարտիզի մեզ առատ ,

Կրրկին վեցեակս անտի քաղեալ ած ընդ քեզ :

Հաւանեցաւ էջ ծերունին 'ի պարտեզ .

Այլ ուչ 'ի կուրծ անկեալ զի  
 վտանգ է 'ի խորհուրդ կանանուոյ ,  
 Թուզ փոխանակ ընդ սերկելի քա-  
 ղեալ դընէ 'ի կողով :

Արդ յեւանել նորա յատեան իշխա-  
 նին ,

Եհարց իւրոցըն Վէնկթամուր • Ո՞  
 է դա :

Նորա ետուն պատասխանի • Նասրէ-  
 տին :

Եւ զի՞նչ ընդ իւր 'ի կողովի : Ասեն՝  
 Թուզ :

Յայնժամ հրամանս ետ մի մի զայն  
 ձրգել 'ի գլուխ ծերունուոյն :

Նա մինչ թըղովքըն քարկոծէր ,  
 տայր փառս առ մէն մի հարուած •

Եւ 'ի զվանէր գոհանալոյն 'ի քար-  
 կոծչացն հարցանել ,

Պատմեաց զիրացըն պատահումն  
 և յաւել •

Զի՞նչ իսկ ընդ գլուխ իմ անցանէր ,  
 խրատու թէ կնոջ լըսէի :

## ԱՌԱԿ ԼԵ

ԵՍՈՎՊ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԵՏՆ

Որպէս սովոր են յարևելս իշխե-  
ցողք

Տըգէտք, յոռիք, 'ի գոյս և եթ գոլ  
անապարձք,

Ա յապիսի ոք գոլով իշխան քաղա-  
քին՝

Ուր բնակուեթիւն հանճարեղին էր  
ծերոյն,

Սամոյր երբեմն արկեալ զիւրեաւ  
ծանրագին,

Եհարց ըղնա թէ զի՛նչ անձին իւ-  
րում՝ նա գին հասանէր :

Եւ 'ի ծերոյն պատասխանել՝ հա-  
զար և եթ գահեկան,

Ասէ . Ա յդքան արժէ սամոյր իմ  
միայն :

Ծերն յաւելու . Վասն այն և ես  
արժեցուցի զքեզ այդքան .

Խրատեալ այսպէս զի՛ այր յոռի  
չարժէ բնաւին և ոչ ինչ :



## ԱՌԱԿ Լ.Զ

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ ԵՒ ԻՇԽԱՆ

Տօնավաճառ 'ի գեղջ ուրեմըն գու-  
լով,

Անդըր դիմէր որեար բազում ամե-  
նուսա,

Բարձեալ 'ի գրասարս բերելով ըղ-  
վաճառս :

Ոմն 'ի նոցունց հրաման առեալ յիշ-  
խանէն,

Վասպէ առ գրան նորա ըղգրասան 'ի  
բակին :

Ըղնոյն և այլ ոք 'ի նմանէ խրնդրէ  
չնորհ,

Եւ զհեա նոցին այլոց ըղնոյն հայ-  
ցելով,

Ոչ և ըս մարթ էր իշխանին չըտալ  
հրաման և նոցա :

Իբրև լոցաւ բակն 'ի գրասարուց կա-  
պելոց,

Եւ տակաւին միւս այլ ոք ուր կա-  
պել ըղգրասան հարցանէր,

Պատել կատեա զլեզուէ իմմէ • ա-  
սաց և խոյս եա 'ի բաց :

Խրատեալ այսուիկ զի չև արւեալ  
ինչ հրաման ,  
Պարտ է խորհել գուշակելով զա-  
պագայն :

## ԱՌԱԿ ԼԷ

### ԱՂԱԽՆԻ ԵՒ ԽԱԲԵԲԱՅ

Խաբեբայի չիք ծանրագոյն պատու-  
հաս ,

Քան չըկարել ոչ և ըս գոք նենդէլ 'ի  
խաբս արկանել •

Զայս առակաւս այսուիկ Եսովս  
յայտ արար :

Ճարակաւոր 'ի փողոցի ուրէք  
վայրի աղաւնեակ ,

Գէտակն ըզգոյշ 'ի մանկըտւոյ և  
'ի հնարից հալածչաց ,

Տեսանէ զոմն հանդարտ և զգոն ա-  
լևոր

Զերկիւղածի կրելով յանձին կեր-  
պարան ,

Եւ ոչ տայ խոյս , 'ի խոյզ բըտոյ  
 պարապելով անկասկած :  
 Յայնժամ ըզքար ընդ հանդերձի-  
 ւրն թադուն  
 Ձրդեալ 'ի նա , զոլոք ոտինրն խոր-  
 տակէ խաբեբայն :  
 Ածի յատեան դատն 'ի բողոք զըր-  
 կելոյն .  
 Ոտն ընդ ոտին հատեալ վըճիս ,  
 հաւիկն ընդ այն ոչ հաճի .  
 Այլ ըզպատիր խընդրէ կապտել  
 ըզկերպարան ոտխին ,  
 Ձի մի և զայլըս կարասցէ նա խա-  
 բել :

## ԱՌԱԿ ԼԸ.

### ՍՈՒՏ ՎԿԱՅ ԵՒ ԵՍՈՎՊՈՍ

Ախորժեղի է խրատ ընդ ծաղըր  
 խառնեալ :  
 Դատապարտեալ զոք ատենի  
 սուտ վըկայ  
 Ի սահմանեալն 'ի յարեւելրս պա-  
 տիժ ,



Որպէս օրէն է անդ ներհակ հեծու  
ցանել ըզնա յէշ,

Իէմք 'ի գաւակ, թեկն 'ի շրուշակ,  
և շուրջ ածել 'ի ծանակ,

Խընդրէր ատեանն ըղծերունւոյն  
գրաստ 'ի փոխ :

Նա զյաւանակն ետ միանդամ ան-  
նախանձ .

Ապա 'ի նոյն անկեալ ոճիր անուղ-  
ղայն ,

Իարձեալ զիշակ իւր մատոյց ծերն  
աղաչեալ .

Իսկ 'ի խընդրել զայն ատենին միւս-  
անդամ ,

Չողաւ Եսովպ առ ապիրատն և  
ասէ .

Կամ դադարեա յոճրէդ և կամ ստա-  
ղիր քեզ էշ , ժանտ դու այր :

## ԱՌԱԿ ԼԹ

## ՀՍՅՐ ԵՒ ԴՍՏԵՐՔ ԻՒՐ

Դրստերք երկու էին ուրումն հարս-  
նացուք .

Ըզմին բրրաի , զմիւսն հարսնացոյց  
մըշակի .

Յայց յեա աւուրց ել բրրատուհոյն ,  
և 'ի խընգրեւ զողջունէ ,

Նա գոհանայր ասելով .

Գոհ եմ հայրիկ , զի բարւոյ առն  
հարսնացայ .

Վաստակի յոյժ , արար յոլով կա-  
ւեղէն .

Եւ եթէ Տէր տացէ զամիսրս քանի  
մի անանձրե ,

Յաւելցի մեզ շահ 'ի թրրծոյ բաղ-  
մառատ :

Եւ հայրն ասէ . Ուրախակից եմ  
քեզ , դրստրիկ , Տէր տացէ :

Անտի առ միւս գուստրըն չողաւ  
ողջունել .

Եւ նա նոյնպէս հաճ ընդ փեսայն  
իւր և գոհ ,

Եղեն մեզ հունձք, ասէ, հայրիկ,  
բաւական .

Եւ թօնընկէցք թէ յաճախեն, զեղ-  
ցին հընձանք մեր գինւով,

Շնորհիւ երկնից պատրաստին մեզ  
կուժք առատ :

Յայնժամ յերկրայս դուժ հայրենի  
վարանեալ՝

Անձրև մաղթել թէ արև ,

Ասէ . Ուրախ եմ դուստր ընդ այն ,  
զի չեմ անօրէն ամպրոպաց :

Օրինակաւս այսուիկ խրատէր  
ծերունին ,

Ի կամս երկնից առնել ըզպէտըս  
մեր և զշահ ապաստան :

## ԱՌԱԿ Խ

### ԼՈՒՈՅ ՍՁԴ ԵՒ ԴՍՏԱԻՈՐ

Բողոք յատեան դատաւորի երարձ  
երբեմն ազգ լըւոց ,

Թէ զի մարդիկ լըլիեն զինքեանս 'ի  
ճըմլել



Մինչև 'ի մահ ընդ եղբնգամբքն  
մատնեալ .

Ճրմելէ և եթ լիցի օրէն և կամ 'ի  
մահ միայն տալ :

Ծանեաւ ըզգաւն ատենակալն ըզ-  
խորամանկ բողոքոյն .

Եւ կըշտամբեալ զարիւնարբու ճըճ-  
ւոյն խուժան անիրաւ ,

Որ զօրէն մեկնակազէն հինից անազգ  
դըրգեալ մարտ ,

Կըրկնապարոյր և կորակոր գնա-  
ցիւք խայթեն կարճօրէն ,

Սայրասուր կըտցաւ ճըճեալ զա-  
րիւն 'ի նիրհ հանգըստեան ,

Ծիրաղս զազիրս արկեալ 'ի ջնջ կը-  
տաւիս ,

Եւ ճախր 'ի վեր իւր 'ի թեթև ա-  
ռեալ թևս ,

Ընդոսաք 'ի բաց յարդար վրիժուց  
խուսափեն ,

Զայս բողոքոյ նոցին 'ի ճահ ետ վը-  
ճիւ .

Մի և ինքեանց այնուհետև ճըճել  
զարիւն և ոստնուլ .

Այլ կամ կայթել և եթ և կամ լի-  
ցի օրէն խայթել լոկ :

Այսպէս ըզկոյր և զանիրաւ բո-  
ղոք նոցին կարկեցոյց :

## ԱՌԱԿ ԽԱ

ԵՍՈՎՊ ԵՒ ԺՊԻՐՀ

Չիք ինչ պատուոյ զուգակրչիւ 'ի  
մարդիկ .

Եւ որ գանձուց իսկ վաճառէ զայն ,  
զանձն ընդ վայր հարկանէ :

Ի զգնալ երբեմն Եսովպոսի ընդ  
հրապարակ քաղաքին ,

Ոմն յամբոխէն ժանտ և ժըպիրհ  
ուժգին նրմա հան ապտակ :

Հասին զինուորք կալան ածին ըզ-  
յանցաւորն 'ի յատեան .

Չողաւ ըզհեա նոցին և ինքն իսկ  
ծերուհին դատախազ ,

Ի խընդիր աշխարհագոյժ թըշնամա-  
նեալ համբաւոյն :

Մատեան 'ի վայր առեալ յայնժամ  
օրէնըսգէտք տան վըճիւ ,

Պարտաւորին հատուցանել նրմա  
երիս դահեկանս :

Այնքանոյ անարդ գրնոց տեսանե-  
 լով ծերունոյն  
 Չանձին սպառիւ վաճառեալ,  
 Միուսնս և ինքն 'ի նոցանէ ած ապ-  
 տակ,  
 Եւ ել 'ի բաց ասելով  
 Քեզ ըզպահանջ իմ թողում:

### ԱՌԱԿ ԽԲ

#### ԱԳԱՀ ԵՒ ԲԵՌՆԱԿԻՐ

Ի տոյժ անձին միշտ աղահէ զօշա-  
 քաղ:  
 Վաճառական ոմն անօթոց բիւ-  
 րեղեայց  
 Ըզսահառի լի դիւրաբեկ վաճառօք  
 Սակ արկանէ ընդ բեռնակրի ածել  
 'ի վեր 'ի շուկայն,  
 Խոստանալով տալ ինչ նրմա յոյժ  
 մեծագին քան զարծաթ:  
 Նա զի աւուրն սարենի էր կարօտ,  
 Տարակուսեալ ընդ կեղակարծն  
 պայման,



Սահայն ըզբեռնին ծանր ածել ընդ  
 զառ 'ի վերն յանձն էառ :

Իբրև էած, խրատ ընդ վարձուց  
 ադահն հիբին ընձեռեալ՝

Մի դու, ասէ, հաւատս ումէք ըն-  
 ծայեր .

Թէ լաւագոյն քեզ քան զանուն  
 բարի ըզդանձս ասիցէ :

Իսկ նա 'նդ սանդուղս 'ի վայր մը-  
 ղեալ ըզսակառին աքացի ,

Յաւել . Եւ դու մի բնաւ հաւատս  
 ընծայեր ,

Թէ քեզ ըզմի իսկ յապակեաց այ-  
 տի ոք

Անբեկ մնացեալ 'ի սակառուջդ ա-  
 ասիցէ :

## ԱՌԱԿ ԽԳ

### ՆԱՍՐԵՏԻՆ Ի ՀԱՐՍԱՆԻՍ

Ի հարսանիս ուրիք երբեմնն հաա-  
 րեաին հրաւիրեալ ,

Ամբոխ բազում կոչնականաց ետես  
 անդ .

- Եւ առ ահին գուցէ 'ի խռան անդ  
 շրփոթեալ կորիցէ ,  
 Զանկիկ յոտինն 'ի գարշապար եդ  
 նըշան :
- Արկան աթոռք , ըսկիզբն եղև խըն-  
 ճոյից .
- Պրտակեցան բաժակք , արբին ար-  
 բեցան ,
- Անկաւ և ինքն իսկ ծերունին ընդ  
 ճաշակիցս 'ի թըմբիր :
- Յայնժամ մի ոմն 'ի յոտանէ նորա  
 զզանկիկըն լուծեալ ,  
 Կասկեաց յոտին այլոյ ուրուք զայն  
 մեղմիկ :
- Եւ 'ի սթափել բազմականին յա-  
 նապակէ և 'ի քնոյ ,
- Լըւաւ ըզճայնըն նըշանակ իւր ծե-  
 րունին առննթեր ,
- Եւ 'ի վարանս եղեալ՝ ումեք , որ  
 անդըն կայր , հարցանէր .
- Դա աւաղիկ ես եմ , այլ ես ո՞ր ի-  
 ցեմ :
- Ա յապէս նա ցնորըս տատճառէր  
 արբեցելոց առ 'ի խրատ :

## ԱՌԱԿ ԽԴ

ԴԱՏԱԻՈՐ ԵՒ ԴԱՀԻՃ

Պահէ զպատիւ տեառն անմըտի յա-  
ճախ ծառայ խմաստուն :

Բիւրս հարուածոց ընդ դուզնա-  
քեայ յանցուածոց

Տայր յարևելքս դատաւոր ոք հրա-  
ման :

Խնայեալ դահճին 'ի հէքն որեար  
յանցաւոր,

Նուաղէր ըզթիւ հարուածոցն հինգ  
հաշուեալ ըզմէն մի հարիւր :

Դատաւորին ապշեալ զն՝ գանքըն  
դիւրընկալք լինէին,

Ըզհարուածոցըն թիւ կըրիկնել հրա-  
մայէ :

Յայնժամ դահիճն առ դատաւորն  
անողորմ .

Վամ չիք երբէք արբեալ քո գան ,  
և կամ թըւել ոչ գիտես :



## ԱՌԱԿ ԽԵ

ԵՍՈՎՊ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՔ ԻՒՐ

Քրնար 'ի ձեռն երբեմն առեալ Ե-  
սովպոս ,

Եւ զմատն 'ի նոյն անշարժ կալեալ  
յաստիճան ,

Շարժէր ըստէս ըզկրնդրնացն ,  
հրնչէին թելք արտանուագ :

Բարեկամաց նորին ակումբ ունկրն-  
դիր

Շարժեա զմատուեագ , ասէն , ցը-  
ծերն , իբր այլք առնէն երաժիշտք ,

Յօրինել երգս ըստ արուեստի ներ-  
դաշնակ :

Իսկ ծերն ասէ . Աստիճանաց 'ի  
խրնդիր

Ըզմատուեագ այլք յերաժրչտաց տա-  
տանէն .

Այլ իմ գրտեալ զայն միանգամ ,  
պինդ ունիմ :

Եցոյց այսու օրինակաւ ծերունին  
Զխորդ արդէտն ըզյայտնի իսկ տը-  
դիտու թիւն իւր յարդէ :

## ԱՌԱԿ ԽԶ

## ԱՆՄԻՏ ԻՆՔՆՍԻՆ

Ձանմըտու թեան իւրոյ ինքնին իսկ  
տայ անմիան հաւասարս :

Ի մատենի ուրեմն անմիան ըն-  
թերցեալ

Ձի կարճամիտ յաճախ գտանին ու-  
րոց երկայն է կըզակ ,

Առ հայելի , և զի գիշեր էր մըթին ,  
Կալեալ միւսով ձեռամբ ըզճրագ ,  
մինչ ըզկըզակ իւր զըննէր .

Յանկարծակի հուր 'ի ճրագէն ա-  
ռեալ ալիքրն կիզան :

Յայնժամ յաւել նա 'ի ստորև մա-  
տենին .

Այո այդպէս է , վըկայեմ , ըզփորձ  
առեալ և ինձէն :

## ԱՌԱԿ ԽԷ

## ԿԱՏՍԱՅ ԵՒ ԵՌՈՏԱՆԻ

Կատասայ զկատասայ պախարակէր  
ասելով,

Ի՞բր է մերձոտ սևաթորմի ու քոյ-  
ին :

Յայնժամ քրքրիջ եռոտանին բար-  
ձեալ՝ որ կայրն ընդ նովաւ ,

Յիրաւի զդա , ասէ , դու ծաղր աւ-  
նէիր ,

Թէ ոչ և քոյդ յար և նրման էր նը-  
մին :

Ի ճահ առաիս այս պատահէ այ-  
նոցիկ ,

Որ կոյրք իւրեանցն գոլով՝ այլոցն  
ախտից են սրատեպք :



## ԱՌԱԿ ԽԸ

## ՇՆՈՐՀԱՏՈՒ ԵՒ ՇՆՈՐՀԸՆԿԱԼ

Քաղցր է 'նդունել, քաղցր և առ-  
նել երախտիս .

Այլ յիշատակ երախտեաց  
Որչափ 'ի ճահ և վայելուչ ընդու-  
նողի է շնորհին ,

Նոյնչափ արգեղ և գրժպըհի է 'ի  
բերան շնորհողին :

Ի հարսանիս ուրեք Եսովս հրա-  
ւիրեալ ,

Եւ զի չէին նորա հանդերձք պատ-  
կանաւորք ակումբին ,

Ոմն 'ի յիւրոց բարեկամաց սամոյր  
'ի փոխ ետ նըմին ,

Որ ըզբնաւից նորա զգեստուց ըզ-  
գրձձութիւնըն ծածկէր :

Անդ ինքն իսկ տէր սամուրեճուոյն  
ճաշակից ,

Մատչէր ըստէս առ ծերունին և ա-  
սէր .

Արկ զայդ 'ի կեր եբր ըզբոյդ .

Եւ լու 'ի լու ամենեցուն միւսան,  
դամ .

Մի ինչ խնայեր, կեր արբ դովաւ և  
վայելեա համարձակ :

Եւ յերեքինեւն ըզնոյն դարձեալ  
վերրասին ,

Ոչ ևրս ժոյժ ծերն ընդ կորանան  
ունելով ,

Հան ըզսամոյրն էարկ 'ի բաց և սակ .

Քանի՛ անշնորհ է շնորհ 'ի դէմս ե-  
րախտեալ :

## ՎԵՐ ԶԱԲԱՆ

Կատարեցի զոր խոստացայն , ածի  
զձեռնարկ իմ յամբող .

Արդ սեան արդեօք եթէ սպիտակ  
տաս քրննաբանդ ինձ քրւեայ .

Թո՛ւխք թէ պայծառք յաւելցին  
վարկք ընթեռնըլեաց 'ի սափոր :

Այլ որպիսի ինչ և բանիցրս քեզ  
թուեսցի կերպարան ,

Սակայն զիմաստս 'ի սմա ծածկեա-  
լըս մըտադիւր ընկալցիս ,

Որ մատենականս է ստոյգ և եթ նը-  
պատակ .

Ձի հոտեանս և գեղեցիկ են ծաղ-  
կունք ,

Թէպէտ և ոչ գեղայօրէն շարայա-  
րեալ 'ի մի փունջ :

Մանկտի հայկազն , ընթերցիր զայս  
և 'ի մըտի քում սերտեա ,

Լիցին յունկան քում գինդ խմաստք  
որ 'ի սմա .

Ձի լաւութիւնս և եթ նաւթճէ զան-  
մա՛հ փառաց քեզ պըսակ :



## ՅԱՆԿ

Ագաճ 133.

Աղաւնի 128 : Աղաւնոյ ձառք 64.

Անդեայ 49.

Անձեղի ձառք 63.

Ամիտ ինքնամասն 140.

Այր 86.

Ասկէպիոս 51.

Աստեղք 8.

Արև 7. 9.

Արծիւ 61. 62.

Արջ 75.

Արքայ Կաղնի 23.

Աւաղակ 77.

Բադ 14.

Բակլայ 98.

Բարեկամք Եսովպոսի 159.

Բեռնակիր 133.

Բու 61.

- Բուէճ՝ 67.  
 Բուիճակ 67.  
 Գազանք 47.  
 Գալէնոս 50.  
 Գայլ 45. 49.  
 Գրաստ 117.  
 Գրաստապան 117.  
 Գեղջուկ 100.  
 Գեաք 59.  
 Գող 115.  
 Գոմէշ 56. 57.  
 Գոմշապան 57.  
 Դահիճ՝ 138.  
 Դամոն 15.  
 Դատաւոր և դատախազք 121: Դատաւոր և ազգ լուոց 132: Դատաւոր և դահիճ՝ 138:  
 Դաստիարակ 85.  
 Դատախազք 121.  
 Դեղձի 17.  
 Դերձակ 122.  
 Դիոս 99.  
 Դստերք 151.  
 Դրացի 102. 106.  
 Եռսաանի 141.  
 Եսովպ, իշավար և ուամիկն 81: Ե.

սովայ առ զօջաքաղն 89 : Եսովայ  
 և մուրացիկ 95 : Եսովայ և ուա-  
 միկն 96 : Եսովայ և գրացին 102 :  
 Եսովայ և կին իւր 103 • 104 • 124 :  
 Եսովայ և սգարտատէրն 105 : Ե-  
 սովայ և նաւավար 111 : Եսովայ և  
 շահաս 112 : Եսովայ և գողք 113 :  
 Եսովայ և վարսավիրայ 115 : Ե-  
 սովայ և կոչնականք 114 : Եսովայ  
 և իշխան յեղամիա 120 : Եսովայ  
 և քաղաքասպեան 126 : Եսովայ և  
 սուա վկայք 129 : Եսովայ և ժը-  
 պիրհ 134 : Եսովայ և բարեկամք  
 իւր 139 •

Երկրաչափ 36 •

Զօջաքաղ 89 •

Էջ 92 • 99 • 110 •

Ընկուղի 34 • 100 •

Թաքոր 38 •

Թղենի 13 •

Թժեհի 14 •

Թուփք 24 •

Ժպիրհ 134 •

Իշավար 81 • 92 •

Իշխան և մեռեալ 101 : Իշխան և վա-  
 ճառականք 127 : Իշխան յեղա-  
 միա 120 •



- Լերինք 38.  
 Լևիաթան 40.  
 Լոր 59.  
 Լու 152.  
 Լուսին 7. 8.  
 Խաբեբայ 128.  
 Խաղախորդ 76.  
 Խեչամիառ 42.  
 Խղուենջն 41.  
 Խող 54.  
 Խոհեակ 52. 65.  
 Խոյ 46.  
 Խոտոր 31.  
 Ծաղկունք արօտականք 26.  
 Ծառք և արև 9 : Ծառք և թագա-  
 ւոր նոցա 19 : Ծառք սղաղաբերք  
 և ուղևորք 21 : Ծառք և մայրե-  
 ւորք 116.  
 Ծիրան 15.  
 Կաղնի վայրի 23.  
 Կասկամ 67.  
 Կատու 50. 58.  
 Կատասայ 144.  
 Կարուակ 122.  
 Կին 86.  
 Կին Եսովպայ 105. 114. 124.

- Կին հեաաբբիւր 108.  
 Կոչնական 114.  
 Կռնկոււնք 66.  
 Հաճար 27.  
 Հայր 118. 151.  
 Հանձարեղ անարդեալ 90.  
 Հաւ և խոհեակ 65: Հաւք երդե-  
 ցիկք 68.  
 Հաւքալ 60.  
 Հերմոն 58.  
 Հիւր 55.  
 Հեծեալ 55.  
 Հօտ 45.  
 Ձի 55.  
 Ձիական 69.  
 Ձիթենի 14.  
 Ձկոււնք 40.  
 Ձմերուկ 55.  
 Ընձղուկ 62.  
 Մայրևոր և յուսապի 18: Մայրևոր  
 և մայրի 22. Մայրևորք և ծառք  
 116.  
 Մայրի 22. 46.  
 Մանկաի 85.  
 Մարդիկ 15. 47.  
 Մեղուաց սպար 70.

- Մեռեալ 101 •  
 Մկուկք 50 •  
 Մնեւ 27 •  
 Մորենի 12 •  
 Մորթեգործ 76 •  
 Մուրացիկ 95 •  
 Մըջիւն 71 • 73 •  
 Յորդանան 59 •  
 Յունասլի 18 •  
 Նապաստակ 52 •  
 Նասրեալին 156 • *տես և Եսովպ •*  
 Նաւալար 111 •  
 Ներք 107 •  
 Նոնենի 15 • 14 •  
 Շահապ 112 •  
 Շահէն 60 •  
 Շորհատու 142 •  
 Շորհրնկալ 142 •  
 Շողամ 55 •  
 Ողնի 58 •  
 Ոլեռն 29 •  
 Ոսկի 75 •  
 Որդի 118 •  
 Որթ 12 •  
 Ուղևոր 21 •  
 Ուղտ 53 •



- Ուղտապան 33.  
 Ուրուր 97.  
 Չափող 29.  
 Պարտապան 83.  
 Պարտատէր 83. 103.  
 Պին 42.  
 Զորեակ 74.  
 Ռամիկն 81. 96.  
 Սարդ 93.  
 Սեխ 54. 37.  
 Սերկէլի 17.  
 Սիսեռն 28.  
 Սոխ 52.  
 Սուտ վկայ 129.  
 Ստախոս 106.  
 Ստեպղին 53.  
 Վաճառական 127.  
 Վարուհի 37.  
 Վարուժան 39.  
 Վարսալիրայ 113.  
 Վահմակ 45. 49.  
 Տաճիկ 97.  
 Տարմահաւ 74.  
 Յինի 26.  
 Յորեան 75.  
 Յուլ 45.

Քաջանայ 77.

Քաղաքապետ 126.

Քաղղեայ 54.

ՔնաՀատ 50.

---





Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is faint and difficult to decipher but appears to include a name and possibly a date or location.

9564956

Small handwritten marks or characters, possibly initials or a signature, located in the lower left quadrant of the page.

2013  
2001

«Ազգային գրադարան»



NL0014956

